ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 56

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29-ը դեկտեմբերի 2021թ.

Նիստին մասնակցել է գիտական խորհրդի 35 անդամներից 31-ը, որից 5-ը նիստին նասնակցել է zoom.us հարթակով, գիտական խորհրդի նախագահն էր Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարը՝ Մ. Ս. Աթոյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մակարյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի 2020-2021թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվություն:

/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան /**

2. ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2022 -2026թթ. ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան /**

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում գիտական դրամաշնորհների տրամադրման կարգում փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավար **Հ. Մովսեսյան /**

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

- **Հաստատել նիստի օրակարգը**:

***<u>Օրակարգի առաջին</u>*՝** «ԵՊՀ ԻՄ-ի 2020-2021թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվություն›› հարցի վերաբերյալ լսեցենին **ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանի** զեկույցը:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը մասնավորապես նշվեց, որ 2020-2021 ուստարվա համար ԵՊՀ ԻՄ դիմել է 439 դիմորդ. բակալավրի առկա ուսուցման համար՝ 266-ը, հեռակա ուսուցման համար՝ 135-ը, մագիստրատուրայի

համար՝ 38-ը: Վերջին տարիներին նկատվում է դիմորդների թվի աճ, և հաշվետու ուստարվա դիմորդների թիվը 31%-ով ավել է եղել նախորդ տարվա դիմորդների թվից: Ուրախալի է, որ երկար տարիներից հետո ԵՊՀ ԻՄ-ը ընդունելություն է կազմակերպել մագիստրոսական 1 ծրագրով՝ «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», որը նպատակ ունի աջակցել մարզի հանրությանը՝ ձեռք բերել երկրորդ մասնագիտություն և դպրոցներն ապահովել անհրաժեշտ կադրերով:

Վերջին 4 ուստարիների ընթացքում առաջին անգամ գրանցվել է ուսանողական համակազմի աճ. հաշվետու ուստարում, կրթական բոլոր աստիճաններում միասին հաշված, մասնաճյուղում սովորել է 1288 ուսանող, որը 75-ով ավել է նախորդ տարվա թվաքանակից: Նշենք, որ հեռակա ուսուցմամբ ուսանողական համակազմը կազմում է ուսանողների ընդհանուր թվի 54.35%-ը, և վերջին տարիներին նրանց թիվը նվազում է, քանի որ դիմորդների մոտ 40%-ը չի կարողանում հաղթահարել մրցութային շեմը:

2020-2021 ուստարվա համավարակային վիճակը ուսանողներին և դասախոսներին ստիպեց կիրառել հաղորդակցվելու և ուսուցումը կազմակերպելու նոր եղանակներ: Մասնաճյուղում բավականին հաջողությամբ թե՛ կառավարումը, թե՛ ուսումնական գործընթացը անհրաժեշտության դեպքում իրականացվել են առցանց: Տարբեր կազմակերպությունների հետ կնքված 35 պայմանագրերի շրջանակներում 2020-2021 ուստարում, համաձայն հաստատված ուսումնական պլանների, իրականացվել է 30 պրակտիկա (ուսումնական, արտադրական և մանկավարժական) 281 ուսանողի համար (առկա ուսուցում՝ 121 ուսանող, հեռակա ուսուցում՝ 160):

Հաշվետու ուստարում կրթական նորամուծությունը հետազոտական բաղադրիչի ներդրումն էր կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում: Հետազոտական աշխատանքների կատարումը ուսանողների մեջ առաջացրել է հետաքրքրվածություն և ոգևորություն. այդ մասին է վկայում իրականացված առցանց հարցումը:

2020-2021 ուստարում ԵՊՀ ԻՄ-ի հիմնական պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հրատարակել են 2 մենագրություն, 1 դասագիրք, 28 հոդված, մասնաճյուղի գիտական խորհուրդը երեք աշխատակցի երաշխավորել է դոցենտի գիտական կոչում ստանալու համար, մեկ դասախոս պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, մեկը ստացել է դոցենտի գիտական կոչում:

Մասնաճյուղն իրականացնում է տարածաշրջանային, հանրապետական և միջազգային համագործակցային մի շարք ծրագրեր, զարգացնում է կապերը հայաստանյան բուհերի և զանազան կազմակերպությունների հետ տարբեր ոլորտներում: Դրա վառ ապացույցն են միայն 2020-2021 ուստարում կնքված համագործակցության 16 հուշագրերը:

Հաշվետու ուստարին առանձնահատուկ է եղել ենթակառուցվածքների համալրման առումով: 2020-2021 ուստարում Մասնաճյուղի տարածքում բացվել են ժամանակակից սարքավորումներով հագեցած և ակտիվ գործունեությամբ արդեն աչքի ընկնող 3 կենտրոն (Տավուշի մարզի Գիտելիքի նորարարական հաբը, «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ը, Գյումրիում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի Իջևանի մասնաճյուղը), մեկ լաբորատորիա (Բնական գիտությունների ֆակուլտետում գործող հետազոտական փորձարարական լաբորատորիան) և մեկ հիշատակի լսարան (ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտ, արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած հերոս Շիրակ Գասպարյանի անվան լսարանը):

ԵՊՀ ԻՄ-ի գրադարանն ուսանողների և դասախոսների սիրելի վայրերից մեկն է, որտեղ բացի գրականություն ձեռք բերելուց՝ նրանք մասնակից են դառնում նաև գրքերի շնորհանդեսների, գրական ընթերցումների, նոր գրքերի քննարկումների, ինչպես նաև համալսարանական տարբեր միջոցառումների: Գրադարանում առկա համակարգիչները հարավորություն են տալիս աշխատել գրադարանում, օգտվել գրադարանի հարուստ էլեկտրոնային պաշարներից, որն առաջարկում է մոտ 950 էլեկտրոնային գիրք (հիմնականում դասագրքեր, մենագրություններ, ինչպես նաև գիտական ամսագրեր և այլն): Գրադարանը հաշվետու ուստարվա ընթացքում ձեռք է բերել կամ նվեր է ստացել ընդհանուր առմամբ 341 գիրք և ուսումնական տարվա ավարտին ունի 19.578 գիրք:

ԵՊՀ ԻՄ-ը մշտապես ձգտում է բարելավել իր կրթական գործառույթները՝ ակտիվացնելով որակի ներքին ապահովման գործընթացները, աջակցելով իր դասախոսական կազմի մասնագիտական որակների բարձրացմանը և ուսանողների կրթական կարիքների բավարարմանը:

Աշխատակիցների հանգստի և առողջության ապահովումը ԵՊՀ ԻՄ-ի գերակա խնդիրներից է: 2020-2021 ուստարվանից ԵՊՀ ԻՄ-ն ամբողջությամբ անցել է 5-օրյա

աշխատանքային գրաֆիկի՝ ազատելով երկուշաբթի օրը և աշխատանքային դարձնելով շաբաթ օրը: Նման գրաֆիկն առանձնապես հարմար է Երևանից ժամանող դասախոսական կազմի համար: Արդեն երկրորդ տարին է, ԵՊՀ ԻՄ-ի հիմնական աշխատակիցներն օգտվում են առողջության ապահովագրությունից «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ընկերության հետ կնքված պայմանագրով՝ անվճար ստանալով մի շարք բժշկական ծառայություններ:

ԵՊՀ ԻՄ-ն իր ֆինանսական միջոցներից 2020-2021 ուստարվա համար ուսանողական նպաստի ձևով 15 ուսանողի տրամադրել է 100% փոխհատուցում, կատարել ուսման վարձավճարի 234 մասնակի փոխհատուցում (քառօրյա պատերազմի մասնակից 17 ուսանող, տնօրենի հայեցողությամբ՝ 127 ուսանող):

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ ռազմական գործողություններ սկսվելու առաջին օրվանից «Հայաստան» համահայկական հիմնադրամը նախաձեռնել էր «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» խորագրով համազգային դրամահավաք-արշավը, որին միացել է Հայաստանից ու աշխարհի չորս ծայրերից ողջ հայությունը: Համազգային դրամահավաքից անմասն չի մնացել նաև մասնաճյուղը՝ հատուկ բացված հաշվեհամարին փոխանցելով 6.500.000 ՀՀ դրամ:

Նույնիսկ պատերազմի և համավարակի, վարձավճարների հավաքագրման գործում առկա դժվարությունների պայմաններում մասնաճյուղում կատարվել են անհրաժեշտ ներդրումներ, ֆինանսներ են տրամադրվել սոցիալական ծրագրերին, գիտական գործունեության, դրամաշնորհների համար և այլն:

ԵՊՀ ԻՄ-ը ձևավորել է 700 միլիոն դրամի հավասար ֆինանսական ապահովության բարձիկ, ինչը որոշակի վստահություն է տալիս գործընթացների պլանավորման հարցում: 2020թ. ԵՊՀ ԻՄ-ի տարեկան բյուջեն նախորդ տարիների համեմատ էապես չի փոխվել. 2019թ. համեմատ այն նվազել է 1,5%-ով: 2020թ. տարեկան բյուջեի 58.9%-ը կազմել են վճարովի ուսուցման ծառայության եկամուտները, իսկ ահա ծախսերի ընդհանուր ծավալում գերակշռել են աշխատանքի վարձատրության ծախսերը՝ 80%: Ուսումնական ծախսերը 2020թ. կազմել են 54.5%, որը վերջին 5 տարիների համար ամենաբարձր ցուցանիշն է:

ԵՊՀ ԻՄ-ի գործունեությունը ներքին և արտաքին շահակիցների համար ամբողջությամբ թափանցիկ և հասանելի է ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքի միջոցով,

որի ձևը փաստացի հնացել է (Մայր բուհի օժանդակությամբ մենք այն պլանավորում ենք արդիականացնել այս տարի), սակայն բովանդակային բաղադրիչներն անընդհատ հարստացվում են՝ դարձնելով այն ուսանողների, դասախոսների և մյուս շահակիցների համար տեղեկատվության վստահելի հարթակ: Հարկ է նշել, որ պատերազմական իրադարձություններից հետո կայքի նորաստեղծ «Մեր քաջ զինվորականները» էջը համալսարանականների և հանրության ամենապահանջված էջն է, որում ներկայացված են պատերազմում անմահացած ԵՊՀ ԻՄ-ի հերոս ուսանողներն ու շրջանավարտները:

ԵՊՀ ԻՄ-ի ուսանողներն իրենց գաղափարներով ու ծրագրերով համախմբվում են ֆակուլտետային և մասնաճյուղային ուսանողական կառույցների շուրջը՝ Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության:

Հաշվետու ուստարում ՈԻԳԸ-ն ուսանողների համար իրականացրել է 172 գիտական, կրթական, մշակութային ծրագրեր և միջոցառումներ: ՈԻԳԸ-ն հաշվետու ուստարում կազմակերպել է բարեգործական ցուցահանդես-վաճառք «Հանուն մեր զինվորների», որով ֆինանսական աջակցություն են ցուցաբերել պատերազմում վիրավորում ստացած 2 զինվորների՝ յուրաքանչյուրին 100 000-ական դրամ:

Ուսանողական խորհուրդն այն ինքնավար կառույցն է, որը բարձրաձայնում է ուսանողների խնդիրները, վերհանում է նրանց ուսումնական և մշակութային կարիքները և հետամուտ է լինում դրանց լուծմանը: Հաշվետու ուստարում կառույցի ներսում գործող 6 մշտական հանձնաժողովների, ռազմահայրենասիրական ակումբի և ֆակուլտետային խորհուրդների կողմից կազմակերպվել են մեկ տասնյակից ավել հանդիպումներ (ուսանողների, մարզի ղեկավար կազմի ներկայացուցիչների, համալսարանի կառավարման մարմինների, մարզի ՀԿ-ների, ԵՊՀ ՈԻԽ-ի, ԱրՊՀ ՈԻԽ-ի հետ), մարզի տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացվել են մի շարք բարեգործական ծրագրեր: ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի ամբողջական հաշվետվությունը կարող եք տեսնել հավելված 1-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ-ի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մ. Միքայելյանը, Ընդհանուր

մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ. Սիմոնյանը և այլոք։

Արտահայտվողները կատարված աշխատանքը համարեցին արդյունավետ և առաջարկեցին գնահատել բավարար։

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվեց.

Որոշում 56/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 15-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 15-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի 2020-2021 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

<u>Օրակարգի երկրորդ</u>՝ « ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2022 -2026թթ. ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» հարցի հետ կապված լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանի հաղորդումը։

Մասնավորապես նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի զարգացման՝ 2022-2026 թթ. ռազմավարական ծրագրի մշակման նպատակով ձևավորվել էին ՌԾ-ի երեք ոլորտների պատասխանատուների գլխավորությամբ աշխատանքային փոքր խմբեր, որոնց հանձնարարվել էր մինչև 2021թ. հոկտեմբերի վերջն ավարտին հասցնել ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքները: Նա նշեց նաև, որ ՌԾ-ի կազմման գործում կարևոր ներդրում են ունեցել նաև ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժինը, ԿԲԴՎ բաժինը և ԵՊՀ ԻՄ-ի որակի կառավարման մշտական հանձնաժողովը։ Ա. Մակարյանը նշեց, որ մեր խնդիրները բավականին հստակ են և մանրամասն, ՌԾ-ում չկան անհասկանալի և չիրականացվող խնդիրներ։

Պարոն Մակարյանը նշեց, որ 2022-2026 ՌԾ-ում ընդհանուր առմամբ ունենք 18 խնդիր, 150 և ավելի գործողություն, ընդգրկում է մի շարք բաժիններ՝

«Առաքելություն», «Տեսլական», «Հիմնարար արժեքները», «Մասնաճյուղի ռազմավարական զարգացման խնդիրները», «Մասնաճյուղի ռազմավարական զարգացման առաջնահերթությունները», «Մասնաճյուղի ռազմավարական զարգացման շարժիչ ուժերը», «Համառոտ տեղեկատվություն ԵՊՀ ԻՄ-ի մասին», «Մասնաճյուղի ընթացիկ վիճակի վերլուծությունը», 3 նպատակները («Բարձրորակ կրթություն», «Գիտություն և նորարարություն», «Հանրային ներգրավվածություն»)՝ իրենց խնդիրներով հանդերձ:

Նա ընդհանուր գծերով ներկայացրեց ՌԾ-ի բովանդակության մասին: ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2022 -2026թթ. ռազմավարական ծրագիրը ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 2-ում:

Արտահայտվեցին Գ. Սիմոնյանը, Մ. Միքայելյանը և այլոք:

Մասնավորապես նրանք կարևորեցին այն հանգամանքը, որ 2022-2026թթ ՌԾ իրականացումը կարող է նպաստել ոչ միայն ԵՊՀ ԻՄ-ի, այլ նաև Տավուշի մարզի զարգացմանը:

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվեց.

Որոշում 56/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի զարգացման 2022 -2026թթ. ռազմավարական ծրագիրը՝ համաձայն հավելված 2:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>Օրակարգի երրորդ</u>՝ ««Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում գիտական դրամաշնորհների տրամադրման կարգում փոփոխություններ կատարելու մասին» հարցի հետ կապված լսեցին ԵՊՀ ԻՄ-ի «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավար Հ. Մովսեսյանի հաղորդումը:

Նա մասնավորապես նշեց, որ վերլուծելով կարգի կիրառական նշանակությունը՝ եկել են այն եզրակացության, որ անհրաժեշտ է կատարել որոշ փոփոխություններ գործող կարգում: Այդ փոփոխությունները վերաբերում են գլխավորապես հայտի բովանդակությանը և ակնկալվող արդյունքներին, որոնց միջոցով ավելի կոնկրետ և տեսանելի կներկայացվեն աշխատանքները՝ որպես գիտական հետազոտությունների ոլորտի շարունակություն: Հ. Մովսեսյանը նշեց, որ ԵՊՀ-ն նույնպես նման կարգ է հաստատել և առաջարկվող փոփոխություններում հաշվի են առնված նաև այդ կարգը: Առաջարկվող ամբողջական փոփոխությունները կարող եք տեսնել հավելված 3-ում:

Արտահայտվեցին՝ Ա. Մակարյանը, Գ. Սիմոնյանը, Միքայելյանը և այլոք: Արտահայտվողները կարևորեցին կայացած մրցույթի արդյունքում ձեռքբերված փորձը և ԵՊՀ-ում հաստատված համապատասխան կարգ և առաջարկեցին հաստատել կարգում առաջարկվող փոփոխությունները:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

Որոշում 56/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում գիտական դրամաշնորհների տրամադրման կարգ»-ում առաջարկվող փոփոխությունները համաձայն հավելված 3-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն իր ամենամյա գործունեությունն իրականացնում է առաքելությանը համահունչ, ռազմավարական պլանավորման համաձայն և կարևորում պատասխանատվությունը ուսանողների կրթության որակի, մասնագիտական առաջընթացի և նրանց տեսանելի ապագայի համար:

2020թ. դեկտեմբերին ըստ ժամանակացույցի ավարտվել էր ռազմավարական ծրագրի իրականացման ժամկետը, ամփոփվել ծրագրի կատարողականը: 2019թ. արդյունքների հիման վրա դուրս էին գրվել այն գործողությունները, որոնք կամ չէին իրականացվել, կամ իրականացվել էին մասամբ: Եվ 2020-21 ուստարում մասնաճյուղն իր գործունեությունն իրականացրել է այդ կարճաժամկետ պլանի համաձայն, որի իրականացման արդյունքներն ըստ ուղղությունների ներկայացված է այս հաշվետվությունում:

Դիմորդներ, ուսանողական համակազմ, շրջանավարտներ

2020-2021 ուստարվա համար ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը բակալավրի առկա ուսուցմամբ ընդունելություն է իրականացրել 11 մասնագիտությունների 12 կրթական ծրագրերով, հեռակա ուսուցմամբ՝ 7 կրթական ծրագրերով, մագիստրատուրայի՝ 1 ծրագրով: 2020-2021 ուստարվա համար մասնաճյուղ դիմել է 439 դիմորդ, այդ թվում բակալավրի առկա ուսուցման համար 266-ը, հեռակա ուսուցման համար 135-ը, մագիստրատուրայի համար՝ 38-ը: Պետք է նշել, որ վերջին տարիներին նկատվում է դիմորդների թվի աճ և հաշվետու ուստարվա դիմորդների թիվը 31%-ով ավել է եղել նախորդ տարվա դիմորդների թվից: Պետք է փաստենք, որ մասնաճյուղի առկա ուսուցման բակալավրի դիմորդների կազմը ձևավորվում է հիմնականում Տավուշի մարզից և հաշվետու ուստարում կազմել է ընդհանուր թվի 94.4%-ը: 2020-21 ուստարվա ընդունելության քննությունների արդյունքներով մասնաճյուղ ընդունվել է **325 դիմորդ,** այդ թվում առկա ուսուցմամբ՝ 212(80%-ը), հեռակա ուսուցմամբ՝ 88(65%-ը), մագիստրատուրա՝ 25 (66%-ը), և սրանք լավ ցուցանիշներ են տարածաշրջանային բուհի համար: Նշենք, որ 2020թ.-ին դիմորդները նախընտրել են առակա ուսուցմամբ «Ֆինանսներ» (ըստ ոլորտի), «Զբոսաշրջություն», «Ինֆորմատիկա և կիրառական

մաթեմատիկա» կրթական ծրագրերը, իսկ հեռակա ուսուցմամբ՝ «Զբոսաշրջություն» և «Պատմություն» կրթական ծրագրերը:

Պետք է ուրախությամբ նշել, որ երկար տարիներից հետո մասնաճյուղը ընդունելություն է կազմակերպել մագիստրոսական 1 ծրագրով՝ «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», որը նպատակ ունի աջակցել մարզի հանրությանը՝ ձեռք բերել երկրորդ մասնագիտություն և դպրոցներն ապահովել անհրաժեշտ կադրերով:

Մասնաճյուղն իրականացնում է դիմորդների հավաքագրման հստակ քաղաքականություն՝ գործադրելով հնարավոր տեղեկատվական գործընթացներ: 2020-2021 ուստարում դպրոց–բուհ շփումները հիմնականում իրականացվել են առցանց՝ հանդիպում-քննարկումների միջոցով: Մինչհամալսարանական կրթության և պրակտիկայի կազմակերպման բաժինը հանդիպումներ է կազմակերպել Տավուշի և Գեղարքունիքի մարզերի դպրոցների 12-րդ դասարանցիների համար՝ նրանց ներկայացնելով տեղեկատվություն մասնաճյուղում տրամադրվող կրթական ծառայությունների մասին: Հաշվետու ուստարում «Բաց դռներ»-ի օրեր, աշակերտների ճանաչողական այցեր մասնաճյուղ և առարկայական օլիմպիադաներ չեն կազմակեր-պվել՝ պայմանավորված համավարակով :

Վերջին 4 ուստարիների ընթացքում առաջին անգամ գրանցվել է ուսանողական համակազմի աճ. հաշվետու ուստարում կրթական բոլոր աստիճաններում միասին հաշված մասնաճյուղում սովորել է **1288 ուսանող**, որը 75-ով ավել է նախորդ տարվա թվաքանակից: Նշենք, որ հեռակա ուսուցմամբ ուսանողական համակազմը կազմում է ուսանողների ընդհանուր թվի **54.35%-ը,** և վերջին տարիներին նրանց թիվը նվազում է, քանի որ դիմորդների մոտ **40%-ը** չի կարողանում հաղթահարել մրցութային շեմը:

Մասնաճյուղի ուսանողական համակազմը լրացվում է նաև տարածաշրջանի չորս միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից (ՄՄՈՒՀ) ուսումը շարունակելու հայտ ներկայացրած ուսանողների հաշվին: 2020թ. բարձր առաջադիմություն ցուցաբերած ՄՄՈՒՀ-երի 32 շրջանավարտ շարունակում է ուսումնա-ռությունը մասնաճյուղում տարբեր մասնագիտություններով:

2020-2021 ուսումնական տարում առկա և հեռակա ուսուցմամբ մասնաճյուղն ունեցել է ընդհանուր **365 շրջանավարտ**, այդ թվում առկա ուսուցմամբ 10 կրթական ծրագրով՝ 150 շրջանավարտ (39 անվճար, 111 վճարովի) և հեռակա ուսուցմամբ 7 կրթական ծրագրով՝ 215 շրջանավարտ: Ամփոփիչ ատեստավորումը հաղթահարել են

առկա ուսուցման բոլոր շրջանավարտները, իսկ հեռակա ուսուցման շրջանավարտների **94.4%-ը** (8 ուսանող չի ներկայացել, 4 ուսանող ստացել է անբավարար):

2019-2020 ուստարվա արդյունքներով պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ ուսանողական նպաստ է տրամադրվել 111 ուսանողի, կրթաթոշակ է տրամադրվել 1-ին կիսամյակում 103 ուսանողի, 2-րդ կիսամյակում՝ 135 ուսանողի: Վճարովի համակարգում սովորող ուսանողներին հատկացվել է ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում, որից օգտվել են սոցիալապես անապահովության համար՝ 84 ուսանող, սահմանամերձ համայնքների համար՝ 221 ուսանող:

Ուսումնական գործընթացի կազմակերպում

2020-21 ուստարվա համավարակային վիճակը ուսանողներին և դասախոսներին ստիպեց կիրառել հաղորդակցվելու և ուսուցումը կազմակերպելու նոր եղանակներ: Մասնաճյուղում բավականին հաջողությամբ թե՛ կառավարումը, և թե՛ ուսումնական գործընթացը անհրաժեշտության դեպքում իրականացվել են առցանց:

Առցանց դասերը նույնպես կազմակերպվել են ֆիքսված դասացուցակով և մասնաճյուղի SS բաժնի կողմից տրամադրված ZOOM հարթակներում, ինչը հնարավորություն է տվել ուսումնամեթոդական վարչությանը հետևել դասերի իրականացմանը և ապահովել ծրագրերի կատարողականն ամբողջությամբ:

Տարբեր կազմակերպությունների հետ կնքված 35 պայմանագրերի շրջանակներում 2020-2021 ուստարում համաձայն հաստատված ուսումնական պլանների իրականացվել է 30 պրակտիկա (ուսումնական, արտադրական և մանկավարժական) **281** ուսանողի համար (առկա ուսուցում՝ 121 ուսանող, հեռակա ուսուցում՝ 160): Պրակտիկաների 47%-ը կազմակերպվել է առցանց՝ առաջնորդվելով ԵՊՀ գիտական խորհրդի 2020թ. նոյեմբերին հաստատված «Պրակտիկայի անցկացումը հեռավար (առցանց) եղանակով» բաժնի դրույթներով:

Ուսումնական պրակտիկաները հետաքրքիր, կիրառական և արդյունավետ դարձնելու համար հաշվետու ուստարում ուսանողների համար պրակտիկայի շրջանակներում կազմակերպվել են նաև այցելություններ, քայլարշավներ, ճանաչողական այցեր և այլն:

Հաշվետու ուստարում կրթական նորամուծությունը՝ հետազոտական բաղադրիչի ներդրումն էր կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում: Հետազոտական աշխատանքների կատարման և գնահատման հետ կապված խնդիրները քննարկելու և փորձի փոխանակման նպատակով Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման (ԿԲԴՎ) բաժինը պարբերաբար կազմակերպել է հանդիպում-քննարկումներ ղեկավարների և ուսանողների հետ. քննարկվել են նաև հետազոտական աշխատանքների թեմաների ընտրության, աշխատանքների պատրաստման, դրանց ներկայացման և գնահատման չափանիշների վերաբերյալ դասախոսների մոտեցումները և իրականացված աշխատանքները:

Իսկ ՄԿՈԱ բաժինը յուրաքանչյուր կիսամյակ, հետազոտական աշխատանքների ավարտից հետո, առացանց հարցման միջոցով իրականցրել է հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից դասախոսների և ուսանողների բավարարվածության ուսումնասիրություն :

Հարկ է նշել, որ հետազոտական աշխատանքների կատարումը ուսանողների մեջ առաջացրել է հետաքրքրվածություն և ոգևորություն: Մասնավորապես, 2-րդ կիսամյակի առցանց հարցմանը մասնակցած ուսանողների 75%-ը փաստել է, որ հետազոտական աշխատանքի կատարումը նրանց տվել է նոր գիտելիքներ, վերլուծելու կարողություններ, դատողություններ և եզրակացություններ կատարելու, ինքնուրույն աշխատելու ունակություններ և այլն, ընդ որում այս արդյունքներն էապես բարձր են 1-ին կիսամյակի արդյունքներից:

Դասախոսական կազմ, գիտական գործունեություն

Յուրաքանչյուր բուհի ստեղծարար ու առաջատար ուժը նրա պրոֆեսորադասախոսական կազմն է: Հաշվետու ուստարում մասնաճյուղում դասավանդել և իրենց գիտահետազոտական գործունեությունն են իրականացրել հիմնական ու ԵՊՀ-ից հրավիրված **84** դասախոս, որոնցից **46-ը** (55%-ը) գիտական աստիճանով, այդ թվում **5** (6%) պրոֆեսոր, **31** (37%) դոցենտ, **48** (57%) ասիստենտ ու դասախոս: 2020-21 ուստարում մասնաճյուղի դասախոսները հրատարկել են 2 մենագրություն, 1 դասագիրք, 28 հոդված, մասնաճյուղի գիտական խորհուրդը երեք աշխատակցի երաշխավորվել է դոցենտի գիտական կոչում ստանալու համար, մեկ դասախոս պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, մեկը ստացել է դոցենտի գիտական աստիճան:

Դասախոսների գիտական գործունեությունը խթանելու համար մասնաճյուղը կիրառում է խրախուսման տարբեր մեխանիզմներ, այդ թվում նաև ֆինանսական: **«ԵՊՀ ԻՄ-ի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման»** կարգի պահանջներին բավարարող 9 աշխատակցի վճարվելու է 650.000 ՀՀ դրամ (նախորդ ուստարվա համար այդ գումարը կազմել էր 475.000 ՀՀ դրամ): Նման արդյունքներն ուրախալի են և ապագայում ակնկալում ենք այդ ցուցանիշների աճ:

2020-21 ուստարում Հայաստանում առկա պատերազմական և համավարակային իրավիճակը իր ազդեցությունն է ունեցել թե՛ ուսումնական գործընթացի, և թե՛ գիտական տարբեր միջոցառումների կազմակերպման վրա, մասնաճյուղն ինքը չի կազմակերպել գիտաժողովներ, սակայն մասնաճյուղի ներկայացուցիչները մասնակցել են այլ բուհերում, կամ հաստատություններում կազմակերպված գիտաժողովների:

Մասնաճյուղում գիտական և հետազոտական կյանքի ակտիվացման և աջակցման գործում իր էական դերն է ունեցել 2020թ. դեկտեմբերին հաստատված **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը**: Այն նպատակ ունի մասնաճյուղի գիտական ներուժի, աշխատակիցների և ուսանողների ներգրավմամբ իրականացնել հետազոտություններ մարզի տնտեսական և սոցիալական տարբեր ոլորտների զարգացման համար: 2021թ. մասնաճյուղում հայտարարվել է դրամաշնորհային մրցույթ, որին մրցութային հանձնաժողովի կողմից ընդունվել է 6 հայտ: Փորձագիտական գնահատումների հիման վրա ֆինանսավորման է երաշխավորել 4 թեմա՝ 400-500 հազար դրամ արժողությամբ: Նշենք, որ նշված թեմաների իրականացման աշխատանքներում ներգրավված են մասնաճյուղի 10 դասախոս և 4 ուսանող:

Համագործակցություն

Մասնաճյուղն իրականացնում է տարածաշրջանային, հանրապետական և միջազգային համագործակցային մի շարք ծրագրեր, զարգացնում է կապերը հայաստանյան բուհերի և զանազան կազմակերպությունների հետ տարբեր ոլորտներում: Դրա վառ ապացույցն են միայն 2020-21 ուստարում կնքված համագործակցության 16 հուշագրերը:

Կրթական ու գիտահետազոտական ոլորտներում համագործակցությանը, ակադեմիական շարժունությանը նպաստելուն, ճանաչողական այցեր, պրակտիկաներ, համատեղ գիտաժողովներ կազմակերպելուն են վերաբերում **Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի**, Երևանի «**Գլաձոր» համալսարանի, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի** և **ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հետ** կնքված հուշագրերը:

Մասնաճյուղը համագործակցում է **Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի և Digital wave** ծրագրավորման ընկերության հետ: Բուհ-գործատու այս համագործակցության նպատակն է նպաստել մարզի տեխնոլոգիական կարողությունների զարգացմանը: Գյումրու կենտրոնի կազմակերպած **Web, Java և iOS** ծրագրավորման խմբերի դասընթացները հաջողությամբ ավարտել է 30 ուսանող:

Digital wave-ը առավել մոտիվացված ուսանողների համար իրականացրել է անվճար դասընթացներ և ձևավորել ծրագրավորողների առաջին 10 հոգանոց թիմը, որն արդեն իրականացնում է կոնկրետ պատվերներ: Այժմ ընթացքի մեջ է նոր դասընթացներ կազմակերպելու և թիմն ընդլայնելու գործընթացը:

2021թ. օգոստոսին ԵՊՀ ԻՄ-ի և Հայաստանի Հանրապետության **Կենտրոնական բանկի** միջև կնքվել է համագործակցության հուշագիր: Սակայն մինչ այդ արդեն եղել են ձևավորված հարաբերություններ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի և մասնաճյուղի միջև «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի իրականացման շրջանակներում: Պաշտոնապես հաստատված համագործակցության նպատակն է ապահովել որակյալ, մրցունակ և միջազգային չափանիշներին համապատասխան տնտեսագիտական կրթություն: Հարկ է նշել, որ ֆակուլտետի ուսանողներն առանձնահատուկ բավարարված են կենտրոնի աշխատակիցների կողմից վարվող դասընթացների որակից և կարևորում են նրանց մատուցած պրակտիկ գիտելիքները:

Համագործակցությունների բազմազանությունը ցուցադրելու համար՝ ներկայացնենք մի քանի կազմակերպություններ, որոնց հետ հաշվետու ուստարում կնքված պայմանագրեր՝

- **«Հայաստանի հաշվապահների ասոցիացիա»** հասարակական կազմակերպություն,
- **ՀՀ կադաստրի պետական կոմիտե,**
- **«Վիքիմեդիա Հայաստան»** գիտակրթական հասարակական կազմակերպություն,

- **«Հույսի կամուրջ»** հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն,
- **“Armenian Volunteer Network”** ԱՄՆ–ում տեղակայված կրթական միջազգային կազմակերպություն ,
- **Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմ:**

Հաջողությամբ շարունակվում է մասնաճյուղի և **«Հայ-ֆրանսիական բարեկամություն և փոխանակում» միության** դեռևս 2008 թվականին սկսված համագործակցությունը: 2020թ. հոկտեմբերին և 2021թ. մայիսին միության ներկայացուցիչ **Ջոս Միլենները** այցելել է մասնաճյուղ և այս այցերի ժամանակ հերթական անգամ կրթաթոշակներ հանձնել «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 12 ուսանողների:

2020-2021 ուստարվա համար Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմը՝ Եգիպտահայ ընկերակցության **«Մաշտոց» հիմնադրամի** աջակցությամբ և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ համագործակցությամբ սահմանել է 100.000-ական ՀՀ դրամի չափով կրթաթոշակ ԵՊՀ ԻՄ-ի՝ սահմանամերձ համայնքների և սոցիալապես անապահով ընտանիքների 28 ուսանողի համար, որից 3 ուսանողի կրթաթոշակ տրամադրել է Տավուշի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը:

ԵՊՀ ԻՄ-ի և **«Ռեստարտ Իջևան» գիտակրթական հասարակական կազմակերպության** միջև կնքված համագործակցության շրջանակներում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով 15 ուսանողի տրամադրվել է ամենամսյա ֆինանսական աջակցություն:

ԵՊՀ ԻՄ-ի և **Հայաստանում ՌԴ դեսպանատան** միջև ձևավորված համագործակցության շրջանակներում 2021թ. մայիսին Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան **Սերգեյ Կոպիրկինը** այցելել է մասնաճյուղ: Նշենք, որ ՌԴ դեսպանատան հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ մասնաճյուղում հիմնադրվել է **երկու կենտրոն**՝ Տավուշի տուրիզմի զարգացման և հետազոտման և Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել օգտագործել Գյումրիում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի ներուժը՝ բարձրագույն կրթության, գիտության և մշակույթի ոլորտում ռուսական բուհերի հետ համագործակցության խորացման ուղղությամբ:

2021թ. ապրիլից Տավուշի մարզպետարանի համագործակցությամբ «Աշխարհագրություն» և «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկաները դասավանդող մարզի ուսուցիչների համար կազմակերպվել են սեմինարներների շարք, որին մասնակցել են մարզի շուրջ 7 տասնյակ ուսուցիչներ: Նման դասընթացների կազմակերպումը Մասնաճյուղի համար ձևավորել է վերապատրաստող կազմակերպության հեղինակություն: Մասնաճյուղը հայտադիմում է ներկայացրել ԿԳՄՄՆ և «երաշխավորվել **որպես հերթական ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող կազմակերպություն**՝ ուսումնական առարկաների ամբողջական փաթեթով»:

Ենթակառուցվածքներ

Նշենք, որ հաշվետու ուստարին առանձնատուկ է եղել ենթակառուցվածքների համալրման առումով: 2020-21 ուստարվա ընթացքում մասնաճյուղի տարածքում բացվել են ժամանակակից սարքավորումներով հագեցած 3 կենտրոն, մեկ լաբորատորիա և մեկ հիշատակի լսարան:

Ուսանողների ստեղծարար և հետազոտական գործունեությանն է նպաստում Եվրոմիության «EU4Youth-SEED» ծրագրի շրջանակներում 2021թ. փետրվարին բացված ԵՊՀ ԻՄ-ում գործող **Գիտելիքի նորարարական հաբը:** Իր գործունեության կարճ ժամանակահատվածում Հաբը դարձել է անվտանգ, հարմարավետ և հասանելի աշխատանքային տարածք ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համար, սոցիալական ձեռներեցության ոլորտում դասընթացների, սեմինարների և տարբեր միջոցառումների կազմակերպման վայր:

Մասնաճյուղի կարևոր ձեռքբերումներից է 2020թ. բացված **«Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ը,** որը ձևավորվել է ԱՄՆ դեսպանության աջակցությամբ: Կենտրոնը հագեցած է անհրաժեշտ սարքավորումներով, ունի ամերիկյան գրքերի և այլ նյութերի հարուստ հավաքածու, որից ազատ օգտվում են մասնաճյուղի դասախոսները և ուսանողները: Կենտրոնը տեղի համայնքի համար կազմակերպում է տարբեր դասընթացներ՝ անգլերենի ուսուցում, մեդիագրագիտություն, նախագծերի մշակում և իրականացում, առաջնորդական և հաղորդակցության հմտություններ և այլն:

2020թ. նոյեմբերին **Գյումրիում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի** միջև կնքված հուշագրով ամրագրվել են համագործակցության մի շարք ուղղություններ

կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդական քաղաքականության ոլորտներում և մասնաճյուղում բացվել է **Ռուսական կենտրոն**ը: Կենտրոնում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են շուրջ 3 տասնյակ մշակութային և գիտակրթական միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, փառատոներ, մրցույթներ, օլիմպիադաներ, գիտական կոնֆերանսներ, կլոր սեղաններ, դասախոսություններ և այլն: Կենտրոնում ակտիվ գործում է «Ռուսական գրականության սիրահարների ակումբը»: Ա.Սոլժենիցինի անվան արտասահմանյան ռուսական տան կողմից կենտրոնին է նվիրաբերվել մեծ քանակությամբ գրականություն:

Բնական գիտությունների ֆակուլտետում ստեղծվել է հետազոտական փորձարարական լաբորատորիա, որի տեխնիկական վերազինման աշխատանքներն ավարտվել են, և այն այժմ դարձել է «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի ուսանողների ամենասիրելի և գործնական տարածքը:

2021թ. հունիսին ԵՊՀ ԻՄ-ում բացվել է մասնաճյուղի շրջանավարտ, արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած հերոս Շիրակ Գասպարյանի անվան լսարան:

Հաշվետու ուստարում ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման և աշխատանքային պայմանների բարելավման նպատակով մասնաշենքերում կատարվել են լսարանների և այլ ենթակառուցվածքների շուրջ 600 քառ.մ մակերեսով վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ: Հիմնանորոգվել են Գիտելիքի նորարարական հաբի, «Տավուշ» հետազոտական կենտրոնի, բնական գիտությունների ֆակուլտետի ուսումնական լաբորատորիայի համար հատկացված տարածքները: Մինչև ուսումնական տարին սկսելը ներկայանալի տեսքի են բերվել նաև մասնաճյուղում գործող 3 լաբորատորիաները, 8 արվեստանոցները, գրադարանը և լսարանները:

Հաշվետու ուստարում, համավարակով պայմանավորված, ուսումնական և քննական գործընթացները, տարատեսակ հանդիպում-քննարկումները, գիտական խորհրդի և տնօրենության նիստերը կազմակերպվել են լսարանային, առցանց և հիբրիդային եղանակներով: Այդ գործընթացների անխափան և արդյունավետ կազմակերպման համար ֆակուլտետներում տեխնիկապես վերազինվել է 12 լսալսարան:

Բարձրացվել է ներքին համակարգչային ցանցի թողունակությունը և կազմում է 100 մբ/վ է (50 մբ/վ ըստ միացման կետերի): Մասնաճյուղում գործարկվող բոլոր 191 համակարգիչները միացված են ներքին ցանցին և համացանցին: Նախատեսվում է աստիճանաբար անցնել ներքին անլար ցանցի:

Գրադարան

Մասնաճյուղի գրադարանն ուսանողների և դասախոսների սիրելի վայրերից մեկն է, որտեղ բացի գրականություն ձեռք բերելուց՝ նրանք մասնակից են դառնում նաև գրքերի շնորհանդեսների, գրական ընթերցումների, նոր գրքերի քննարկումների, ինչպես նաև համալսարանական տարբեր միջոցառումների: Գրադարանում առկա համակարգիչները հարավորություն են տալիս աշխատել գրադարում, օգտվել գրադարանի հարուստ էլեկտրոնային պաշարներից, որը առաջարկում է մոտ 950 էլեկտրոնային գիրք (հիմնականում դասագրքեր, մենագրություններ, ինչպես նաև գիտական ամսագրեր և այլն): Գրադարանը հաշվետու ուստարվա ընթացքում ձեռք է բերել, կամ նվեր է ստացել ընդհանուր առմամբ 341 գիրք և ուսումնական տարվա ավարտին ունի 19.578 գիրք:

Նշենք, որ գրադարանի աբոնենտները կազմում են մասնաճյուղի ուսանողների և աշխատողերի ընդհանուր թվի 70%-ը: Ակնհայտ է, որ համակարգչային տեխնիկայի ու մատչելի ինտերնետ կապի առկայությունը մարդկանց հնարավորություն է տալիս օգտվել առցանց տարբեր հարուստ գրադարաններից, սակայն պետք է փաստել, որ այնուամենայնիվ, մասնաճյուղի գրադարանային պաշարները թույլ են տալիս լինել ու մնալ պահանջված:

Որակի ներքին ապահովում, կրթական բարեփոխումներ

Յուրաքանչյուր բուհի բարձր հեղինակությունը և վարկանիշը ձևավորվում են նրա մատուցած որակյալ կրթությամբ ու գիտությամբ, հանրությանը տրամադրած ծառայություններով: Ուստի մասնաճյուղը մշտապես ձգտում է բարելավել իր կրթական գործառույթները՝ ակտիվացնելով մասնաճյուղում որակի ներքին ապահովման գործընթացները, աջակցելով իր դասախոսական կազմի մասնագիտական որակների բարձրացմանը և ուսանողների կրթական կարիքների բավարարմանը: Մասնաճյուղում այս գործընթացները համակարգում և իրականացնում են դեռևս 2011 թվականից գործող մասնագիտական կրթության և որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինը և նորաստեղծ կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման (ԿԲԴՎ) բաժինը:

Որակի ապահովման բաժինը՝ որակի գործընթացներին աջակցող ուսանողական խմբի հետ միասին, հաշվետու ուստարում իրականացրել է խոհրդատվական, պլանավորման, փաստաթղթերի ստեղծման և վերանայման, շահակիցների բավարարվածության ուսումնասիրության և գործընթացների արդյունավետության

գնահատման մի շարք աշխատանքներ։ Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից բաժինն աջակցում է բոլոր ստորաբաժանումներին ռազմավարական ծրագրին համապատասխան իրականացնել տարեկան պլանավորում և կատարողականի վերլուծություն։ 2020թ. դեկտեմբերին բաժնի կողմից կազմվել է մասնաճյուղի 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականի զեկույցը։

Բաժինը մշակել, ստորաբաժանումներում քննարկել և 2021թ. փետրվարին ԳԽ-ի հաստատմանն է ներկայացրել «Էթիկայի կանոնագիրքը», որում սահմանված են էթիկայի սկզբունքները, ակադեմիական ազնվություն և անազնվություն, ԵՊՀ ԻՄ ղեկավարների, վարչական և ակադեմիական աշխատակազմի և ուսանողների էթիկական վարքագծի կանոնները, կարգապահական տույժերը և նրանց տրման ընթացակարգը, էթիկայի հանձնաժողովի իրավասությունները և պարտականությունները։

Նշենք, որ ՄԿՈԱ բաժինը, ըստ ժամանակացույցի, իրականացնում է ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրություններ, մասնաճյուղի գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատում՝ գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) օգնությամբ, հավաքագրված տվյալների վերլուծությունների հիման վրա կազմում խնդիրների և բարելավման առաջարկների փաթեթ։

2021թ. հունիսին մասնաճյուղը ԵՊՀ կազմում անցել է փորձագիտական գնահատում՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով՝ նախօրոք իրականացնելով ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն։ Փորձագիտական խմբի հետ հանդիպումներին մասնաճյուղը ներկայացնող մեր դասախոսները և ուսանողները ակտիվ և բովանդակալից մասնակցություն են ունեցել՝ մասնաճյուղի մասին ձևավորելով բարձր կարծիք։

Բուհի դասախոսական կազմի մանկավարժական կարողությունների և հմտությունների արդիականացումն ու զարգացումը մշտապես ղեկավարության ուշադրության կենտրոնում է, որին աջակցում է Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժինը։ 2020-21 ուստարում բաժնի կողմից կազմակերպվել են ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների վերաբերյալ **12** վերապատրաստումներ, որոնք հիմնականում անց են կացվել առցանց, և որոնց մասնակցել է մասնաճյուղի 55 դասախոս։

2020-21 ուստարում Կրեդիտային համակարգով ԵՊՀ ԻՄ դասախոսական կազմի որակավորման բարձրացման 2016-21 կրթագիտական ծրագրի շրջանակներում

մասնաճյուղն առաջին անգամ ներգրավվել է ԵՊՀ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին: Մասնաճյուղի դասախոսները մասնակցել են ԴՈԲ կրթագիտական ծրագրի բոլոր մոդուլներով կազմակերպված վերապատրաստման 9 դասընթացների:

ԿԲԴՎ բաժինը կազմակերպել է հանդիպում-քննարկումներ «Կորպուսային լեզվաբանություն», «Ինքնության դրսևորումները պատմամշակութային համատեքստերում», «Հաղորդակցության դիվանագիտություն» թեմաներով, իրականացրել է «Ուսուցման կազմակերպումը Google Apps-ի և նրա գործիքակազմի միջոցով», «Աշխատանքը Zoom հարթակում» վերապատրաստման դասընթացները:

2021թ. փետրվարի 2-ից 4-ը ԵՊՀ ԻՄ-ի 19 դասախոսներ մասնակցել են «Առցանց դասավանդման հմտությունների զարգացում» վեբինարին:

Հաշվետու ուստարում ԿԲԴՎ բաժնի կողմից մշակվել կամ վերանայվել են կրթական և գնահատման գործընթացը կարգավորող մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման կարգերը, հետազոտական, ավարտական աշխատանքների և մագիստորոսական թեզերի գնահատման ռուբրիկները: Մշակվել է ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման կարգը, մշակման փուլում է ինքնուրույն աշխատանքների կատարման կարգը և հետազոտական աշխատանքներ կատարելու մեթոդական ուղեցույցը:

ՄԿՈԱ բաժնի հետ միասին ԿԲԴՎ բաժինը վերանայել է կրթական ծրագրերի մշտադիտարկման և պարբերական վերանայման կարգը, որից հետո ԿԲԴՎ բաժինը 2021թ. ապրիլից մասնաճյուղում սկսել է ծրագրերի մոնիտորինգը:

Հաշվետու ուստարում վերանայվել են մասնաճյուղի բոլոր 12 կրթական ծրագրերը, պատրաստվել և վերանայվել է «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագիրը, առանձին կազմվել են կրթական ծրագրեր նաև հեռակա ուսուցման մասնագիտությունների համար:

Սոցիալական աջակցության ծրագրեր

Աշխատակիցների հանգիստի և առողջության ապահովումը մասնաճյուղի գերակա խնդիրներից է:

2020-21 ուստարվանից մասնաճյուղն ամբողջությամբ անցել է 5 օրյա աշխատանքային գրաֆիկի՝ ազատելով երկուշաբթի օրը և աշխատանքային դարձնելով շաբաթ օրը: Նման գրաֆիկը առանձնապես հարմար է Երևանից ժամանող դասախոսական կազմի համար:

Արդեն երկրորդ տարին է մասնաճյուղի հիմնական աշխատակիցներն օգտվում են առողջության ապահովագրությունից «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ընկերության հետ կնքված պայմանագրով՝ անվճար ստանալով մի շարք բժշկական ծառայությունն:

Մասնաճյուղի աշխատակիցները և ուսանողները նույնպես ԵՊՀ-ի մյուս աշխատակիցների հետ հավասար հնարավորություն ունեն օգտվելու համալսարանական հանգստի բազաներից:

Մասնաճյուղն իր ֆինանսական միջոցներից 2020-2021 ուստարվա համար ուսանողական նպաստի ձևով 15 ուսանողի տրամադրել է 100% փոխհատուցում, կատարել ուսման վարձավճարի 234 մասնակի փոխհատուցում (քառօրյա պատերազմի մասնակից 17 ուսանող, տնօրենի հայեցողությամբ՝ 127 ուսանող):

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ ռազմական գործողություններ սկսվելու հառաջին օրվանից «Հայաստան» համահայկական հիմնադրամը նախաձեռնել էր «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» խորագրով համազգային դրամահավաք-արշավը, որին միացել է Հայաստանից ու աշխարհի չորս ծայրերից ողջ հայությունը: Համազգային դրամահավաքից անմասն չի մնացել նաև մասնաճյուղը՝ հատուկ բացված հաշվեհամարին փոխանցելով 6.500.000 ՀՀ դրամ:

<u>Ֆինանսական ծախսեր</u>

Նույնիսկ պատերազմի և համավարակի պայմաններում, վարձավճարների հավաքագրման գործում առկա դժվարությունների պայմաններում, մասնաճյուղում կատարվել են անհրաժեշտ ներդրումներ, ֆինանսներ են տրամադրվել սոցիալական ծրագրերին, գիտական գործունեության, դրամաշնորհների համար և այլն: Մասնաճյուղը ձևավորել է 700 մլն. դրամի հավասար ֆինանսական ապահովության բարձիկ, ինչը որոշակի վստահություն է տալիս գործընթացների պլանավորման հարցում:

Նշենք, որ 2020թ.-ին մասնաճյուղի տարեկան բյուջեն նախորդ տարիների համեմատ էապես չի փոխվել. 2019թ.-ի համեմատ այն նվազել է 1,5%-ով: 2020թ. տարեկան բյուջեի

58.9 %-ը կազմել են վճարովի ուսուցման ծառայության եկամուտները, իսկ ահա ծախսերի ընդհանուր ծավալում գերակշռել են աշխատանքի վարձատրության ծախսերը՝ **80%:** Ուսումնական ծախսերը 2020թ. կազմել է **54.5%,** որը վերջին 5 տարիների համար ամենաբարձր ցուցանիշն է:

2020թ. մեկ ուսանողին ընկնող եկամուտների ծավալը կազմել է 418.5 հզ.դրամ, իսկ մեկ ուսանողին ընկնող ծախսերի ծավալը ավելացել է՝ կազմելով 355.3 հզ.դրամ, ինչը պայմանավորված է ընդհանուր ուսումնական ծախսերի աճով:

Վերջին երեք տարիներին նվազել է տարեկան էներգածախսը՝ պայմանավորված խնայողության ռեժիմների կիրառմամբ: 2019-2020թ. մեկ մարդուն ընկնող էներգածախսն էապես նվազել է՝ կապված նաև համավարակի պայմաններում դասապրոցեսի առցանց իրականացմամբ:

Պաշտոնական կայք, հաշվետվություն հանրությանը

Մասնաճյուղի գործունեությունը ներքին և արտաքին շահակիցների համար ամբողջությամբ թափանցիկ և հասանելի է մասնաճյուղի պաշտոնական կայքի միջոցով, որի ձևը փաստացի հնացել է (համալսարինի օժանդակությամբ մենք այն պլանավորում ենք արդիականացնել այս տարի), սակայն բովանդակային բաղադրիչներն անընդհատ հարստացվում են՝ դարձնելով այն ուսանողների, դասախոսների և մյուս շահակիցների համար տեղեկատվության վստահելի հարթակ:

Մասնաճյուղի պաշտոնական կայքը 2021 թ. հունիսի 10-ի դրությամբ ունեցել է 272 էջ՝ 3247 նյութերով: Հաշվետու ուստարում միայն կայքի «Ինֆորմացիա» բաժնի 7 էջերում տեղադրվել է **220** նյութ, այդ թվում՝ 43 հոդված ու տեսանյութ՝ **«**ԶԼՄ-ները մեր մասին» էջում, 67 հայտարարություն, 80 նորություն, 19 իրադարձություն, 11 տնօրենության նիստեր, 3 հարցուպատասխան:

Հարկ է նշել, որ պատերազմական իրադարձություններից հետո կայքի նորաստեղծ «Մեր քաջ զինվորականները» էջը համալսարանականների և հանրության ամենապահանջված էջն է, որում ներկայացված են պատերազմում անմահացած մասնաճյուղի հերոս ուսանողներն ու շրջանավարտները:

Հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը ընդլայնելու համար մասնաճյուղի արտաքին կապերի բաժինն օգտագործում է սոցիալական ցանցերում գործող մի քանի հարթակներ, մասնավորապես, **"Facebook"** սոցիալական ցանցում գործող

խումբը, որը 2021թ. հունիսի դրությամբ ուներ **3500 անդամ** և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի **էջը՝ 4941 հետևորդով**: 2020-2021 ուստարվա ընթացում կայքի «**Մրցույթներ և թափուր հաստիքներ»** բաժնում տեղադրվել է **120 թափուր** հաստիքների վերաբերյալ հայտարարություն, արդյունքում շուրջ երեք տասնյակ **շրջանավարտ** անցել է աշխատանքի տարբեր կազմակերպություններում:

Ուսանողական կառույցներ, ուսանողների նվաճումներ

Մասնաճյուղի ուսանողներն իրենց գաղափարներով ու ծրագրերով համախմբվում են ֆակուլտետային և մասնաճյուղային ուսանողական կառույցների շուրջը՝ Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերությունը ուսանողների համար իրականացրել է 172 գիտական, կրթական, մշակութային ծրագրեր և միջոցառումներ, այդ թվում՝ 4 ինտելեկտուալ խաղ, 21 սեմինար քննարկումներ, 3 կինոդիտում, 2 գիտաճանաչողական այց, 2 մրցույթ, 125 դասընթացներ, որոնք կազմակերպել են ուսանողների նախաձեռնած **մասնագիտական ակումբները՝** պատմաբանների, բանասերների, լեզվաբանների, մանկավարժների, տնտեսագետների, ծրագրավորողների և այլն՝ համախմբելով հետաքրքրասեր և կրեատիվ ուսանողների:

ՈՒԳԸ-ի կողմից հաշվետու ուստարում կազմակերպել է բարեգործական **ցուցահանդես-վաճառք** «Հանուն մեր զինվորների», որով ֆինանսական աջակցություն են ցուցաբերել պատերազմում վիրավորում ստացած 2 զինվորների՝ յուրաքանչյուրին 100 000-ական դրամ:

Ուսանողական խորհուրդը այն ինքնավար կառույցն է, որը բարձրաձայնում է ուսանողների խնդիրները, վեր է հանում նրանց ուսումնական և մշակութային կարիքները և հետամուտ է դրանց լուծմանը:

Հաշվետու ուստարում կառույցի ներսում գործող 6 մշտական հանձնաժողովների, ռազմահայրենասիրական ակումբի և ֆակուլտետային խորհուրդների կողմից կազմակերպվել են մեկ տասնյակից ավել հանդիպումներ (ուսանողների, մարզի ղեկավար կազմի ներկայացուցիչների, համալսարանի կառավարման մարմինների, մարզի ՀԿ-ների, ԵՊՀ ՈՒԽ-ի, ԱրՊՀ ՈՒԽ-ի հետ), մարզի տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացրել են մի շարք բարեգործական ծրագրեր (օրինակ, նվերներ Այգեպար գյուղի մանկապարտեզի սաներին,

առաջին անհրաժեշտության իրերի, սննդի, հագուստի, հիգիենայի պարագաների հավաքագրում և բաշխում մարզի սահմանագծում ծառայող զինվորներին, «Արդի երիտասարդության ռեալ հնարավորությունները մարզում» փորձի փոխանակում-քննարկում՝ «Այգեպանի տնակ»-ի անձնակազմի հետ և այլն)։

Մասնաճյուղի ուսանողական խորհուրդը արդյունավետ համագործակցում է Մայր բուհի ՈՒԽ-ի հետ և նրանց աջակցությամբ ստեղծվել և ֆեյսբուք սոցիալական ցանցում գործում է «Տավուշի երիտասարդներ» խումբը, որը դարձել է ՀՀ տարբեր բուհերում սովորող տավուշեցի ուսանողների և շրջանավարտների հաղորդակցման և արդյունավետ քննարկուների հարթակ։

2021թ. հունվարին Մ.Վ.Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղում կայացել է **ուսանողների օրվան** նվիրված հանդիսավոր միջոցառում, որը կազմակերպվել էր **Գիտության և մշակույթի Երևանի ռուսական կենտրոնը՝ Հայաստանում Ռուսաստանի համալսարանների ուսանողների ասոցիացիայի** հետ համատեղ։ Միջոցառման շրջանակներում «Տարվա լավագույն ուսանող» անվանակարգում մրցանակի է արժանացել հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի **Լիանա Կարենի Կարապետյանը**։

Վերջում ներկայացնենք մասնաճյուղի մարզական հաջողության մասին։ 2021թ. փետրվարին կայացած սամբոյի Հայաստանի պատանեկան առաջնությունում 98+ կգ քաշային կարգում մասնաճյուղի «Պատմություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանող **Գրիգոր Բեկնազարյանը** դարձել է առաջնության հաղթող՝ նվաճելով Եվրոպայի և աշխարհի առաջնություններին մասնակցելու ուղեգիր և պարգևատրվել է ոսկե մեդալով ու պատվոգրով։

Ուրախությամբ կարող ենք փաստել, որ մասնաճյուղն արդյունավետ կատարում է իր առջև դրած խնդիրները և ասել, որ ունենալով Մայր բուհի նման աջակից և հենարան, մասնաճյուղը կդառնա ուսումնագիտական եզակի կենտրոն՝ իր շուրջը հավաքելով մարզի ստեղծագործ ու խելացի երիտասարդությանը։

Ա.Մակարյան

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար
Ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

ԵՊՀ ԻՄ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2022-2026 թթ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի
Թիվ _____ նիստում (_____)

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ_____Ա. Հ. Մակարյան

ԵՊՀ ԻՄ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
(2022-2026 թթ.)

ԻՋԵՎԱՆ - 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ 4
ՏԵՍԼԱԿԱՆ 4
ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ 5
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 7
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԸ 8
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՊՀ ԻՄ-Ի ՄԱՍԻՆ 8
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 10
ՆՊԱՏԱԿ 1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 15
ԽՆԴԻՐ 1.1. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 15
ԽՆԴԻՐ 1.2. ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 17
ԽՆԴԻՐ 1.3. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ 19
ԽՆԴԻՐ 1.4. ԲԱՐՁՐՈՐԱԿ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 21
ԽՆԴԻՐ 1.5. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 23
ԽՆԴԻՐ 1.6. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 25
ՆՊԱՏԱԿ 2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 27
ԽՆԴԻՐ 2.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 27
ԽՆԴԻՐ 2.2. ԲԱՐՁՐՈՐԱԿ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 29
ԽՆԴԻՐ 2.3. ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ 30
ԽՆԴԻՐ 2.4. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՄԻՋԱՎԱՅՐ 31
ԽՆԴԻՐ 2.5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 31
ԽՆԴԻՐ 2.6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ 32
ԽՆԴԻՐ 2.7. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 33
ԽՆԴԻՐ 2.8. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ 34
ՆՊԱՏԱԿ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ 36
ԽՆԴԻՐ 3.1. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 36
ԽՆԴԻՐ 3.2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 37
ԽՆԴԻՐ 3.3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 38
ԽՆԴԻՐ 3.4. ԿԱՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 39
ԽՆԴԻՐ 3.5. ԵՊՀ ԻՄ-Ի ՎԱՐԿԱՆԻՇԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ 40

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, առավելապես փոխանցումը և տարածումն է հայագիտության, մշակույթի, հումանիտար, սոցիալ-տնտեսական և բնական գիտությունների ուղղություններով:

Իրականացնելով աշխատաշուկայում պահանջված բակալավրական ու մագիստրոսական մասնագիտությունների կրթական ծրագրեր, ստեղծելով ուսանողակենտրոն միջավայր, կիրառելով ուսուցման ժամանակակից եղանակներ և որակի ապահովման կառուցակարգեր՝ մասնաճյուղը նպաստում է տարածաշրջանը անհրաժեշտ մասնագետներով համալրելուն և մշակութային կյանքի զարգացմանը:

ՏԵՍԼԱԿԱՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) ձգտում է տրամադրել որակյալ կրթական ծրագրեր, իրականացնել նորարարական ուսանողամետ ուսուցում, խրախուսում է կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում:

ԵՊՀ ԻՄ-ը ձգտում է դառնալու այնպիսի հաստատություն, որը՝

- ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր՝ խարսխված հետազոտության, ստեղծագործ աշխատանքի և նորարարության վրա և համահունչ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի հիմնարար սկզբունքներին,
- ապահովում է ուսանողների՝ բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը,
- մատչելի է և ընտրության լայն հնարավորություններ է ընձեռում հասարակության ամենատարբեր շերտերին,
- ուսանողներին և աշխատողներին տրամադրում է բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ և բարենպաստ միջավայր,
- իր գործունեության բոլոր բնագավառներում ապահովում է որակի անընդհատ բարելավում բուհի գործուն և արդյունավետ վարչարարության և կառավարման միջոցով,
- տրամադրում է լրացուցիչ շարունակական կրթության և մասնագիտական խորհրդատվության ծառայություններ՝ հանրային պահանջարկին համապատասխան:

ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարությունը նպատակաուղղված է համալսարանի արդիականացման և թվային վերափոխման խնդիրների ներդաշնակեցմանը, արտաքին և միջազգային համագործակցության, նոր կրթական ծրագրերի, գիտահետազոտական, մեթոդական և կադրային ճկուն գործունեության շնորհիվ համալսարանի զարգացման նոր հայեցակարգի ձևավորմանը, որի հիմքում ընկած են հետևյալ **հիմնարար արժեքները**.

1. Ուսանողի հաջողություն.

Մասնաճյուղի ուշադրության կենտրոնում առաջին հերթին ուսանողի կրթական ձեռքբերումները, ուսումնառությունից նրա բավարարվածությունը և հաջողություններն են: Այդ նպատակով Մասնաճյուղը ուսանողի կարիքները դնում է իր ակադեմիական գործունեության և օժանդակ ծառայությունների կազմակերպման, կրթական քաղաքականության և կրթական ծրագրերի մշակման հիմքում:

2. Մատչելի կրթություն և ներառականություն.

Մասնաճյուղը կարևորում է յուրաքանչյուր կարողունակ անհատի՝ բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը և ուսանողներին ապահովում է բարձրորակ և մատչելի կրթական փորձառությամբ, տրամադրում ֆինանսական աջակցություն:

3. Ակադեմիական ազատություն և բարեվարքություն.

Մասնաճյուղը կարևորում է յուրաքանչյուր ուսանողի և աշխատողի ակադեմիական ազատությունը և բարեվարքությունը:

4. Ժողովրդավարական միջավայր.

Մասնաճյուղը կարևորում է ուսանողների և աշխատողների մասնակցությունը բուհին վերաբերող հարցերի քննարկմանն ու որոշումների ընդունման գործընթացին՝ արժևորելով բազմակարծությունն ու ժողովրդավարական միջավայրը:

5. Պատասխանատվություն.

Գիտակցելով իր դերը՝ մասնաճյուղն իր առաքելությունն ընդլայնում է՝ ակտիվ ազդեցություն ունենալով տարածաշրջանի աշխատաշուկայի վրա, ինչպես նաև նպաստելով մարզի տնտեսական զարգացման առաջնահերթ ոլորտներում աշխատատեղերի ստեղծման կարողությունների զարգացմանը:

6. Համագործակցություն.

Լինելով տարածաշրջանային ուսումնական հաստատություն՝ մասնաճյուղը կարևորում է «բաց հաստատության» կարգավիճակը անձերի, խմբերի և կազմակերպությունների

փոխհամագործակցության համար ինչպես մարզային, այնպես էլ հանրապետական և միջազգային մակարդակներում։

7. Նորարարություն և ստեղծարարություն.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ իբրև կրթական հաստատության ակնկալվող մոդելը գիտության, մշակույթի և նորարարությունների սերտ համադրությամբ տարածաշրջանային նորարարական հետազոտական կենտրոն-համալսարանի մոդելն է։

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իր առաքելության շրջանակներում 2022-2026 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով միտում ունի լուծելու հետևյալ **խնդիրները**.

1. ուժեղացնել համալսարանի մրցունակությունը,
2. պարբերաբար բարելավել կրթական և գիտահետազոտական գործունեության որակը,
3. ընդլայնել տրամադրվող գիտակրթական ծառայությունների շրջանակը,
4. ակտիվացնել համալսարանի ծառայություններից օգտվող պոտենցիալ պահանջատերերի հետ աշխատանքը,
5. գիտակրթական գործունեությունից անցնել «հետազոտական համալսարան»- ի սկզբունքներին, այսինքն՝ կրթական գործունեությունը կառուցել համալսարանի աշխատակիցների, նաև ուսանողների առաջատար գիտական հետազոտությունների արդյունքների վրա,
6. կատարելագործել համալսարանի կառավարման համակարգը «գործարար համալսարան» սկզբունքի հիման վրա՝ որոշումների կայացման գործընթացներում ներգրավելով ավելի շատ արտաքին շահակիցների, դասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողների,
7. ձևավորել կանխահայաց կադրային քաղաքականություն՝ աշխատանքի մեջ ներգրավելով գիտնականների և հետազոտողների, տաղանդավոր երիտասարդների համար ձևավորելով մասնագիտական և անձնային աճի համակարգ,
8. ձևավորել միասնական համալսարանական տեղեկատվական միջավայր «թվային համալսարան» հայեցակարգի շրջանակներում, որը ենթադրում է կառավարման գործընթացների մաքսիմալ ավտոմատացում և տեղեկատվական ապահովում թվային տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՊՀ ԻՄ-ի 2022-26 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը ներառում է բոլոր հիմնական ուղղություններով համալսարանի զարգացման ճանապարհային քարտեզը և ենթադրում է համակարգային փոփոխություններ առաջնահերթ նախագծերի իրականացման միջոցով:
Համալսարանի առաջնահերթություններն են.

1. «Թվային համալսարան»- ի զարգացում համապատասխան կրթական ծրագրերի իրականացման միջոցով՝ ըստ գիտական և կրթական զարգացման բոլոր ուղղությունների՝ ստեղծելով լաբորատորիաներ, կիրառելով նորարարական տեխնոլոգիաներ,

2. բիզնես համագործակցություն տարածաշրջանային ինքնակառավարման մարմինների և գործարար հանրության հետ՝ տարածաշրջանային խնդիրներ լուծելու ունակ բարձրորակ կադրերի պատրաստման համար,
3. համագործակցության զարգացում արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ,
4. պրոֆեսորադասախոսական կազմի համար մասնագիտական, ստեղծագործական և գիտական աճի ապահովում,
5. ուսանողների ստեղծարար և սոցիալական ներուժի զարգացում երիտասարդական նորարարական միջավայրի ստեղծման միջոցով, նրանց զարգացման և առաջընթացի ապահովում բազմազան սոցիալ-մշակութային պրակտիկաների, փորձարարության և ոչ ֆորմալ կրթության հիման վրա,
6. համալսարանի մրցունակության և վարկանիշի բարձրացում կրթության ճկուն և նորարարական կազմակերպման շնորհիվ:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԸ

ԵՊՀ ԻՄ-ը 2022-2026 թթ. ռազմավարական զարգացման համար սահմանում է հետևյալ շարժիչ ուժերը.

- ակտիվ կադրային քաղաքականություն,
- Մասնաճյուղի և գործատուների ակտիվ համագործակցություն,
- կրթական գործընթացի և գիտական հետազոտությունների ինտեգրում,
- կրթական ծրագրերի և գիտահետազոտական նախագծերի միջգիտակարգային կապերի և ճկունության ուժեղացում, միջֆակուլտետային արգելքների նվազեցում,
- կրթական և գիտական ոլորտներում արդյունավետ մարքեթինգի իրականացում,
- Մասնաճյուղի հանրապետական և միջազգային մակարդակով ճանաչելիության ձևավորում, դիմորդների ներգրավման գործող արդյունավետ համակարգ,
- բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների՝ համալսարանի արդիականացմանն ուղղված նորարարական և գործարար նախաձեռնությունների աջակցում,
- ուսումնառության հեռավար տեխնոլոգիաների լայնածավալ կիրառում,
- գրավիչ համալսարանական միջավայրի և ենթակառուցվածքների ստեղծում:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՊՀ ԻՄ-Ի ՄԱՍԻՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հիմնադրվել է 1994 թվականին Իջևանի տարածաշրջանային բազմաճյուղ քոլեջի բազայի վրա: Վերջինս ստեղծվել էր ՀՀ բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի՝ 1991 թ. հոկտեմբերի 10-ի որոշմամբ և կոչված էր ՀՀ հյուսիսարևելյան տարածաշրջանում ակտիվացնելու գիտամշակութային կյանքը, կասեցնելու սահմանամերձ

շրջաններից երիտասարդության արտահոսքը, պատրաստելու խոր գիտելիքներով և բազմակողմանի ունակություններով օժտված, ազգային և համամարդկային մշակույթի ավանդներին նվիրված մասնագետներ:

1994 թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարության թիվ 440 որոշմամբ՝ Իջևանի տարածաշրջանային քոլեջը վերակազմավորվել է որպես Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, որը գործում է մինչև այսօր:

Իր 27-ամյա գործունեության ընթացքում ԵՊՀ ԻՄ-ը տվել է շուրջ 7000 շրջանավարտ, որոնց մեծամասնությունը հաջողությամբ աշխատում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, պետական և հանրային կառույցներում, բանկային համակարգում և այլն: Մեկ տասնյակից ավել շրջանավարտներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, աշխատում են Մասնաճյուղում:

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գերակա նպատակներից է հայագիտության, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բնական գիտությունների ու մշակույթի զարգացումը տարածաշրջանում: Դրանից ելնելով՝ բուհում գործում է 4 ֆակուլտետ (Բնական գիտությունների, Հումանիտար գիտությունների, Տնտեսագիտության, Կիրառական արվեստի) և 10 ամբիոն:

Բնական գիտությունների ֆակուլտետն ունի 2 ամբիոն (Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության) և իրականացնում է 3 կրթական ծրագիր («Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Բնապահպանություն և բնօգտագործում»): Ֆակուլտետում գործում է Բնագիտության և համակարգչային տեխնիկայի ուսումնական 2 լաբորատորիա:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետն ունի 4 ամբիոն (Հայոց պատմության և հասարակագիտության, Հայոց լեզվի և գրականության, Մանկավարժության և հոգեբանության, Օտար լեզուների) և իրականացնում է 7 կրթական ծրագրեր («Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն»):

Տնտեսագիտության ֆակուլտետն ունի 2 ամբիոն (Ընդհանուր տնտեսագիտության, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության) և իրականացնում է 2 կրթական ծրագրեր («Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Զբոսաշրջություն»):

Կիրառական արվեստի ֆակուլտետն ունի 2 ամբիոն (Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի, Գծանկարի, գունանկարի և քանդակի) և իրականացնում է 2 կրթական ծրագիր («Կիրառական արվեստ», «Դիզայն»): Ֆակուլտետում գործում է 7 արվեստանոց՝ Գծանկարի և գունանկարի, Տեքստիլի, Դիզայնի, Հագուստի մոդելավորման, Խեցեգործության, Քանդակի, Փայտի գեղարվեստական մշակման:

2006 թվականից մասնաճյուղում **հեռակա ուսուցման ձևով** իրականացվում է 5-ամյա բակալավրական կրթություն՝ 9 կրթական ծրագրերով («Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ֆինանսներ», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Բնապահպանություն և բնօգտագործում», «Քարտեզագրություն և կադաստրային գործ»):

Ներկայումս Մասնաճյուղի 4 ֆակուլտետներում առկա ուսուցմամբ 12 կրթական ծրագրերով ուսանում է ավելի քան 587 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում 9 կրթական ծրագրերով սովորում է 588 ուսանող (այդ թվում՝ 24-ը մագիստրոսի կրթական ծրագրով):

ԵՊՀ ԻՄ-ում ուսանողների հետաքրքիր առօրյան (ուսումնագիտական, գիտակրթական, մշակութային, ժամանցային տարբեր միջոցառումներ և նախաձեռնություններ) ապահովում, նրանց իրավական գիտակցությանը, հայրենասիրական ոգու բարձրացմանը նպաստում են **ուսանողական ինքնակառավարման մարմինները՝** Ուսանողական խորհուրդը (ՈԻԽ), Ուսանողական գիտական ընկերությունը (ՈԻԳԸ):

Մասնաճյուղն ունի ժամանակակից համակարգիչներով հագեցած 4 **համակարգչային լսարան**, 15981 միավոր գրքով, 1321 գիտական հանդեսներով ու ամսագրերով և 2204 անուն էլեկտրոնային գրականությամբ **գրադարան**, որի մասն է կազմում նաև ժամանակակից տեխնիկական միջոցներով ապահովված հարմարավետ **ընթերցասրահը**:

2018 թ. հուլիսին ԵՊՀ ԻՄ-ում բացվել է **Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնը**, որը 2020 թ. նոյեմբերին վերակազմավորվել է որպես **Գյումրիում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի Իջևանի մասնաճյուղ**: Վերջինիս հիմնական նպատակը կրթության, գիտության, մշակույթի, պատմական և ազգագրական գործունեության, երիտասարդական քաղաքականության ոլորտներում հայ-ռուսական համագործակցության զարգացումը և խորացումն է:

2020 թ. փետրվարից մասնաճյուղում գործում է **«Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ը**, որի նպատակն է մարզի՝ մասնավորապես Իջևան քաղաքի և հարակից գյուղերի բնակիչների համար կազմակերպել կրթական, մշակութային և տեղեկատվական միջոցառումներ, տարբեր թեմաների շուրջ ուսումնական կարճատև ծրագրեր և անգլերենի անվճար դասընթացներ, որոնց շնորհիվ կզարգանան մասնակիցների սոցիալական և տեխնիկական հմտությունները, ինչպես նաև տեղի բնակչությունը կծանոթանա ամերիկյան արժեքներին, պատմությանը և մշակույթին:

2021 թ. հուլիսից ԵՊՀ ԻՄ-ում պաշտոնապես բացվել է **Տավուշի մարզի Գիտելիքի նորարարական հաբը**, որի նպատակը EU4Youth Սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի զարգացումն է՝ սահմանային գյուղերում կանաչ առաջընթացի համար ծրագրի շրջանակներում Տավուշի մարզում սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի խթանումը: Այն միտված է երիտասարդների նոր գիտելիքիների ձեռքբերմանը, գաղափարների գեներացմանը, դասընթացների ու միջոցառումների կազմակերպմանը:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր Մասնաճյուղը գտնվում է գիտահենք կրթություն ապահովելու մեծ գործընթացի մեջ: Նոր մարտահրավերները Մասնաճյուղի զարգացման նոր հնարավորություններ են :

<u>Մասնաճյուղի ուժեղ կողմերը.</u>

1. **Ռազմավարական ծրագրի** առկայություն, ծրագրին համապատասխան միջնաժամկետ և կարճաժամկետ պլան-ժամանակացույցների առկայություն, ծրագրի իրականացման և

գնահատման գործընթացում արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածություն, ծրագրի իրականացումը գնահատելու մեխանիզմների և գործիքների առկայություն, ծրագրի կատարողականի վերաբերյալ հաշվետվողականության առկայություն,

2. հստակ կանոնակարգերով և աշխատակարգերով գործող **կառավարման** մարմիններ, Մասնաճյուղի գործունեության պլանավորման վերևից ներքև և հաշվետվողականության ներքևից վերև սկզբունքի կայուն կիրառություն, Մասնաճյուղի **կառավարման,** գործունեության գնահատման և որակի ապահովման գործընթացներին ներքին և արտաքին շահակիցների ներգրավում, որոշումների կայացում հավաքագրված, վերլուծված հավաստի տեղեկատվությանհիման վրա, փոքրաթիվ վարչական աշխատակազմ և նրանց արդյունավետ տեղաբաշխում, անձնակազմի կայունության ապահովման քաղաքականություն,

3. **որակի** ներքին ապահովման արդյունավետ գործող համակարգ, որակի ապահովման քաղաքականության առկայություն, Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) ու Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման (ԿԲԴՎ) բաժինների առկայություն, ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործող բազմազան մեխանիզմներ,

4. տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան **մասնագիտությունների** առկայություն և այդ մասնագիտությունների համար որակավորումների ազգային շրջանակին համադրելի բակալավրի և մագիստրոսի **կրթական ծրագրեր,** կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման գործող կարգ, մասնագիտությունների կրթական ծրագրերի (ՄԿԾ) ղեկավարների արդյունավետ գործող ինստիտուտ, գիտական և դրամաշնորհային ծրագրերը համակարգող կենտրոնի առկայություն,

5. ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան հիմնական և հրավիրված բարձրակարգ **պրոֆեսորադասախոսական** անձնակազմ, նրանց ուսումնական և գիտական գործունեության, առաջընթացի և մասնագիտական աճի ապահովման, գնահատման և խրախուսման գործող մեխանիզմներ, ԵՊՀ-ի և այլ առաջատար ՄՈՒՀ-երիդասախոսական կազմի ներգրավում,

6. Մասնաճյուղում **ուսանողներին** վերաբերող գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի առկայություն և ուսումնական գործընթացի կազմակերպում՝ համաձայն կանոնակարգերի, ուսանողների բեռնվածության արտահայտում ECST կրեդիտներով, Մինչհամալսարանական կրթության և պրակտիկաների կազմակերպման բաժնի առկայություն, դիմորդների ներգրավման գործող մեխանիզմներ, նպատակային պրակտիկաների կազմակերպում, առկա և հեռակա ուսուցման համակարգերում իրականացվող համընկնող և տարբեր կրթական ծրագրեր, հանրապետության մասշտաբով ցածր վարձավճարներ,

7. բազմագործոն գնահատման համակարգի առկայություն, ուսանողների տվյալների և առաջադիմության ավտոմատացված «Supervision YSU» էլեկտրոնային համակարգի առկայություն, Մասնաճյուղի պաշտոնական կայքի առկայություն, Մասնաճյուղի գործընթացների վերաբերյալ հավաստի, թարմ և օբյեկտիվ տեղեկատվության **հանրայնացում,**

8. ներքին համակարգչային ցանցի, անվճար, անսահմանափակ, գերարագ ինտերնետ կապի, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության առկայություն,

9. անհրաժեշտ ենթակառուցվածքների և ռեսուրսների առկայություն։

Մասնաճյուղի թույլ կողմերը.

1. Տարածաշրջանի կազմակերպությունների հետ Մասնաճյուղի թույլ համագործակցություն, հետադարձ կապի ապահովման մեխանիզմների անկատարություն,
2. ԵՊՀ և այլ ՄՈՒՀ-երի հետ թույլ համագործակցություն և փորձի փոխանակման ցածր մակարդակ,
3. հրավիրված պրոֆեսորադասախոսական անձնակազմի մեծ թվաքանակ, ամբիոնների տեղացի վարիչների փոքր քանակություն, պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման մեխանիզմների անկատարություն,
4. գնահատման համակարգում ուսանողների հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդների անկատարություն,
5. ուսանողների և դասավանդողների փոխանակման կամ շարժունության ծրագրերի բացակայություն,
6. գիտաժողովներին մասնակցության, գիտական հոդվածների տպագրման փոքր թիվ, գիտական ներուժի ոչ բավարար ներգրավվածություն պետական պատվերով և նպատակային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական հետազոտություններում,
7. գրագողության դեմ պայքարի արդյունավետ մեթոդների, ակադեմիական ազնվության բավարար մակարդակի ապահովման մեխանիզմների անկատարություն,
8. ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման մեխանիզմների բացակայություն,
9. գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների պասիվ ներգրավվածություն,
10. Մասնաճյուղի շրջանավարտների հետ պասիվ համագործակցություն,
11. օտարերկրյա դիմորդների և ուսանողների բացակայություն,
12. հատուկ կարիքներով անձանց համար մասնաճյուղում անհրաժեշտ պայմանների, առանձնացված ընթերցասրահի բացակայություն։

Մասնաճյուղի հնարավորությունները.

1. Մասնաճյուղի գերակշռող դերը տարածաշրջանի աշխատաշուկան որակյալ մասնագետներով ապահովելու գործում, մարզի դպրոցների և պետական քոլեջների հետ համագործակցության ընդլայնում,
2. Մասնաճյուղի **կառավարման** գործընթացներին արտաքին և ներքին շահակիցների մասնակցության և հետադարձ կապի ակտիվացում,
3. ուսումնագիտական համագործակցության ակտիվացում ԵՊՀ-ի և այլ առաջատար ՄՈՒՀ-երի հետ, ԵՊՀ միջազգային կապերի օգտագործում, համագործակցության ակտիվացում ՀՀ ԳԱԱ, Որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) հետ, համագործակցություն տարածաշրջանի գործատուների, շրջանավարտների հետ,
4. դասախոսական կազմի գիտական գործունեության ակտիվացում, ուսանողների ներգրավում գիտական, հետազոտական աշխատանքներում,
5. արտաքին ֆինանսական նոր աղբյուրների ներգրավում,

6. արտաքին շահակիցների մասնակցության ակտիվացում ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում, ՄԿԾ-ների հրապարակայնության ընդլայնում,
7. դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացում, շրջանավարտներից և պրակտիկանտ ուսանողներից արտաքին շահակիցների բավարարվածության մակարդակի բարձրացում։

Վտանգները.

1. Տարածաշրջանում մասնագիտությունների կրթական ծրագրեր իրականացնող նույնատիպ այլ ՄՈՒՀ-երիբացակայություն, աշխատաշուկայի պահաջարկի հաճախակի փոփոխություն, գործազրկության բարձր մակարդակ և տարածաշրջանում կադրերի գերհագեցվածություն, դեմոգրաֆիական փոփոխությունները տարածաշրջանում,
2. ֆինասնական մուտքերի անբավարարություն,
3. կրթության ոլորտում օրենսդրական դաշտի հաճախակի փոփոխություններ, որակավորումների սեկտորիալ շրջանակի բացակայություն, մասնագիտության կրթական չափորոշիչների բացակայություն,
4. ՀՀ-ում դիմորդների թվի նվազում, Մասնաճյուղի դիմորդների թվի նվազում,
5. տարածաշրջանում PR նյութերի հրապարակման և տարածման սահմանափակություն,
6. աշխատաշուկայում պահանջարկի փոփոխություններով պայմանավորված՝ ՄԿԾ-ների վերանայման արտաքին շահակիցների թույլ արձագանք,
7. տարածաշրջանում գիտահետազոտական կազմակերպությունների և գիտահետազոտական պատվերների բացակայություն,
8. տարածաշրջանում գիտամշակութային պասիվ միջավայր,
9. ուսման նկատմամբ շահագրգռվածության անկում,
10. ՀՀ-ում գնաճի բարձր տեմպեր,
11. պետության կողմից բարձրագույն կրթությանը տրվող թույլ ֆինանսական աջակցություն,
12. ֆորս-մաժոր։

Եզրակացություն.

Մասնաճյուղը, օգտվելով ուժեղ կողմերից և արտաքին հնարավորություններից, չեզոքացնելով թույլ կողմերն ու արտաքին վտանգները, նպատակադրված է.

1. ստեղծել նոր կապեր և ակտիվացնել գործող կապերը տարածաշրջանի արտաքին շահակիցների հետ, ՌԾ-ի կատարողականի բացթողումները տեղափոխել հաջորդ ռազմավարական ծրագիր՝ խնդիրների վերհանմանը և ծրագրի մշակմանը մասնակից դարձնելով ներքին և արտաքին շահակիցներին,
2. բարելավել Մասնաճյուղի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը, վերանայել Մասնաճյուղի գործունեությունը գնահատող չափորոշիչները և ցուցիչները, դրանք համապատասխանեցնել Ռազմավարական ծրագրի խնդիրներին,
3. ուսումնասիրել կառավարման և վարչարարության ոլորտում հաջողությունների հասած այլ ՄՈՒՀ-երի փորձը,
4. մշակել և ներդնել ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ,

5. կրթական ծրագրերում բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացման և գնահատման գործընթացը,
6. ծրագրերում վերաբաշխել ժամաքանակները՝ ավելացնելով գործնական կարողությունների ձևավորմանն ուղղված ժամերը, ներդնել պարտադիր առաջադրանքների և մասնագիտական առաջընթացի գնահատման մեխանիզմներ,
7. աջակցել և խրախուսել դասախոսների և ուսանողների գիտական և հետազոտական գործունեությունը, կրթական ծրագրերի իրականացման գործում ներգրավել գիտնականների և հետազոտողների,
8. ներդնել պրոֆեսորադասախոսական կազմի հետ աշխատանքային հարաբերությունների սահմանման և աշխատավարձերի հաշվարկման նոր համակարգ,
9. զարգացնել և հզորացնել ՄԿԾ-ների իրականացման նյութատեխնիկական բազան,
10. մշակել և ներդրել արտաքին և ներքին շահակիցների կրթական պահանջմունքների ուսումնասիրման նոր, արդյունավետ մեխանիզմներ,
11. ակտիվացնել համագործակցությունը ՀՀ և արտերկրի առաջատար բուհերի հետ,
12. կիրարկել գրագողության դեմ պայքարի արդյունավետ մեթոդներ, բարեվարքության և ակադեմիական ազնվության բավարար մակարդակի ապահովման նոր մեխանիզմներ։

ՆՊԱՏԱԿ 1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հավատարիմ մնալով ուսանողին գիտահենք կրթություն տրամադրելու առաքելությանը՝ տրամադրել մրցունակ գիտելիք և փորձառություն, որոնք ուսանողին հնարավորություն կտան դրական ներդրում ունենալ պետության և հասարակության զարգացման գործում:

ԽՆԴԻՐ 1.1. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ներգրավել բարձր ներուժ ունեցող դիմորդների՝ ապահովելով ներառականության սկզբունքը:

Ակնկալվող վերջնարդյունք

Մարքեթինգային գործընթացների և դիմորդների մասնագիտական ինքնորոշմանն ուղղված միջոցառումների, ինչպես նաև գրավիչ առաջարկների և ուսանողների ընտրության վերանայված մեխանիզմների կիրառման միջոցով ձևավորված բարձր ներուժ ունեցող դիմորդների կայուն հոսք՝ ընդունելության օպտիմալացված չափաքանակներին համապատասխան:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. Օպտիմալացնել ընդունելության ամենամյա պլանավորումը՝ ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի:

- ✓ Տարածաշրջանի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ Մասնաճյուղի ընդունելության իրատեսական ցանկ:

2. Ապահովել կրթության հասանելիություն սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչների համար:

- ✓ Ուսումնական միջավայրի առկայություն տեսողական, լսողական, հենաշարժողական և այլ խնդիրներ ունեցող ուսանողների համար:

3. Գտնել ֆինանսավորման աղբյուրներ՝ բարձր (18-20) միավորներով վճարովի հիմունքով ընդունված դիմորդներին ԵՊՀ ԻՄ-ում կրթաթոշակով ապահովելու համար:

- ✓ Տարեկան առնվազն 2 կրթաթոշակի սահմանում:

4. Կազմակերպել դիմորդների մասնագիտական ինքնորոշման միջոցառումներ:

- ✓ Մասնաճյուղի ընդունելության մասին ընդլայնված և բազմազանեցված գովազդող նյութեր (դիմորդի ուղեցույց, բուկլետ, տեսաձայնագրություն, տեղեկատուներում նյութեր),
- ✓ մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ և կարիերայի պլանավորման վերաբերյալ խորհրդատվություններ,
- ✓ ակնարկային և թեմատիկ դասախոսություններ,
- ✓ Մասնաճյուղի կայքում օտարերկրյա, այդ թվում՝ սփյուռքահայ դիմորդների համար Մասնաճյուղի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր օտար լեզուներով (անգլերեն, ռուսերեն),
- ✓ «Բաց դռների օրեր» և ապագա դիմորդների ճանաչողական այցեր,
- ✓ մասնակցություն կրթական ցուցահանդեսների,
- ✓ կազմակերպված ամառային դպրոցներ,
- ✓ դիմորդների թվի աճ,
- ✓ ուսանողների կեցության լուծված տարբերակ (տվյալների հավաքագրում, վարձակալության հիմունքով տրվող բնակարանների տվյալներ):

5. Կազմակերպել առկա և/կամ առցանց նախապատրաստական դասընթացներ:

- ✓ Նախապատրաստական դասընթացների կազմակերպման գործող ընթացակարգ,
- ✓ նախապատրաստական դասընթացներ վարող դասախոսների վճարման ներդրված համակարգ,
- ✓ կազմակերպված առկա և/կամ առցանց նախապատրաստական դասընթացներ,
- ✓ մինչև 20 տոկոս դիմորդների ընդունում հեռակա ուսուցման համակարգ նախապատրաստական դասընթացներից:

6. Ընդլայնել և բարելավել ԵՊՀ ԻՄ-ի հետ քոլեջների համագործակցությունը:

- ✓ Քոլեջներից դիմորդների թվի աճ,
- ✓ կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն:

ԽՆԴԻՐ 1.2. ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Տրամադրել բարձրակարգ ակադեմիական գիտելիք և փորձառություն յուրաքանչյուր ուսանողին՝ երաշխավորելով ընդհանրական և մասնագիտական կարողություններ և ապահովելով կրթության շարունակականություն:

Ակնկալվող վերջնարդյունք

Նոր կառուցվածքով, պարբերաբար թարմացվող ճկուն միջառարկայական կրթական ծրագրեր՝ ուսանողների համար շարժունության և մասնագիտական փորձառության լայն հնարավորություններով, որոնց վերջնարդյունքները բավարարում են շահակիցների կրթական կարիքները և համադրելի են միջազգային նմանատիպ ծրագրերի վերջնարդյունքների հետ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Ներդնել աշխատանքի վրա հիմնված կրթական ծրագրերի հայեցակարգ:**

   - ✓ Աշխատանքի վրա հիմնված կրթական ծրագրերի իրականացման գործող հայեցակարգ,
   - ✓ աշխատանքի վրա հիմնված առնվազն 2 կրթական ծրագիր (պրակտիկայի վրա):

2. **Բարելավել կրթական ծրագրերի վերջնարդյունքները՝ զարգացնելով ուսանողների մասնագիտական և միջգիտակարգային գիտելիքներն ու կարողությունները:**

   - ✓ Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում «4C» կարողությունների (քննական մտածողություն, համագործակցություն, հաղորդակցականություն, ստեղծարարություն) ձևավորող վերջնարդյունքների առկայություն,
   - ✓ կրթական ծրագրերում վերանայված մասնագիտական կոմպետենցիաներ:

3. **Մշակել և կրթական ծրագրերում ներդնել ԵՊՀ ԻՄ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմ:**

   - ✓ ԵՊՀ ԻՄ-ի բակալավրիատի **և մագիստրատուրայի** շրջանավարտների պարտադիր ընդհանրական կոմպետենցիաների մշակված կազմ գործող կրթական ծրագրերում:

4. **Պարբերաբար իրականացնել ուսանողների կրթական կարիքների գնահատում:**

   - ✓ Ուսանողների կրթական կարիքների գնահատման գործող մեթոդաբանություն,
   - ✓ ուսանողների վերհանված կրթական կարիքների և դրանց լուծումների վերաբերյալ ամենամյա զեկուցումներ, կրթական ծրագրերի վերանայման առաջարկներ,
   - ✓ կրթական ծրագրերից բավարարված ուսանողների թվի աճ:

5. **Պարբերաբար իրականացնել աշխատաշուկայի պահանջարկի գնահատում՝ կրթական ծրագրերի բարելավման և նոր կրթական ծրագրերի ներդրման համար:**

- ✓ Աշխատաշուկայի պահանջարկի գնահատման մշակված մեխանիզմներ,
- ✓ աշխատաշուկայի պահանջարկի գնահատման ամենամյա զեկույցներ,
- ✓ արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրությունների վերլուծության հիման վրա բարելավված կրթական ծրագրեր,
- ✓ աշխատաշուկայի վերլուծության արդյունքների հիման վրա ներդրված նոր կրթական ծրագրեր,
- ✓ Մասնաճյուղի շրջանավարտներից արտաքին շահակիցների բավարարվածության աճ,
- ✓ ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության աճ:

6. **Ներդնել կրթական ծրագրերի միջազգային հենանշման (բենչմարքինգի) ներբուհական կարգ:**

- ✓ Կրթական ծրագրերի միջազգային հենանշման (բենչմարքինգի) գործող ներբուհական ընթացակարգ,
- ✓ բենչմարքինգի հիման վրա վերակառուցված կրթական ծրագրեր:

7. **Վերանայել ուսանողների գնահատման կարգը՝ գնահատման արժանահավատության բարձրացման և ձևերի բազմազանեցման նպատակով:**

- ✓ Ուսանողների գնահատման նորացված մեթոդաբանություն և գործող նոր կարգ,
- ✓ գրագողության դեմ պայքարի ներդրված մեխանիզմներ,
- ✓ գնահատումից ուսանողների բավարարվածության աճ,
- ✓ ըստ գնահատման նոր մեթոդաբանության՝ դասընթացների վերանայված փաթեթներ:

8. **Կրթական ծրագրերում ներմուծել լրացուցիչ մասնագիտացման (Minor) հնարավորությունը:**

- ✓ Լրացուցիչ մասնագիտացման (Minor) հնարավորությամբ իրականացվող փորձարարական առնվազն 1 կրթական ծրագիր:

9. **Ուսանողների շարժունությունն ապահովելու նպատակով կրթական ծրագրերում նախատեսել «շարժունության պատուհաններ»:**

- ✓ Կրթական ծրագրերում «շարժունության պատուհանների» առկայություն,
- ✓ շարժունության ծրագրերում ներգրավված դասախոսների և ուսանողների թվաքանակի աճ:

10. **Գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման կարգը բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերի համար:**

- ✓ Կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման հաշվետվություններ և ծրագրերի բարելավման առաջարկություններ,
- ✓ պրակտիկաների բարելավված ծրագրեր և դրանց իրականացումից ուսանողների բավարարվածության աճ,
- ✓ ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման ենթարկված կրթական ծրագրեր:

11. **Նախապատրաստել Մասնաճյուղի կրթական ծրագրերը հավատարմագրման:**

- ✓ Իրականցվող կրթական ծրագրերի ինքնավերլուծություններ,
- ✓ ծրագրային հավատարմագրում անցած առնվազն 2 կրթական ծրագիր:

ԽՆԴԻՐ 1.3. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Յուրաքանչյուր ուսանողի համար ապահովել զարգացմանը միտված ֆիզիկական և վիրտուալ միջավայր:

Ակնկալվող վերջնարդյունք

Կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով ապահովված և հասանելի, ներքին և արտաքին շահակիցների ուսմանը, աշխատանքին և արտալսարանային արդյունավետ գործունեությանը նպաստող ֆիզիկական և վիրտուալ մշտապես թարմացվող միջավայր:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Բարելավել ուսումնական լսարանների և լաբորատոր ենթակառուցվածքների հագեցվածությունը:**

- ✓ Տարեկան արդիականացված առնվազն 4 լսարան,
- ✓ հետազոտական վիրտուալ լաբորատորիա,
- ✓ Մասնաճյուղի մասնաշենքերի հիմնանորոգման և վերակառուցման տարբերակված ծրագրեր,
- ✓ օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործման համար վերաբաշխման ծրագրեր:

2. **Ստեղծել «Թվային կամպուս»՝ զարգացնելով դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի թվային հմտությունները, յուրաքանչյուր ուսանողի համար ապահովել թվային ռեսուրսների հասանելիությունը:**

- ✓ Կրթական և գիտական ծրագրերում ընդլայնված և արդյունավետ կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- ✓ բազմաֆունկցիոնալ թվային գրադարանի առկայություն,
- ✓ գրադարանի ամբողջական էլեկտրոնային քարտարանի առկայություն,
- ✓ գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն:

3. Զարգացնել և ընդլայնել Մասնաճյուղի գրադարանի գործառույթները և ուսումնական ռեսուրսները:

- ✓ Միջազգային գրադարանային ցանցերից օգտվող և կոնսորցիումներին/համընկերություններին մասնակցող ուսանողներ,
- ✓ համալրված մասնագիտական գրականություն,
- ✓ արդիականացված գրադարանային ծառայություն,
- ✓ համալրված էլեկտրոնային գրականություն,
- ✓ գրադարանում առկա գրականությունից և մատուցվող ծառայություններից օգտվողների բավարարվածության աճ:

4. Դասախոսների և ուսանողների արտալսարանային արդյունավետ գործունեության համար ապահովել անհրաժեշտ տարածք և բարենպաստ պայմաններ:

- ✓ Արտալսարանային գործունեության համար կահավորված հատուկ տարածքներ,
- ✓ Մասնաճյուղի անվտանգության ապահովման գործող ժամանակակից համակարգ,
- ✓ վերանորոգված մարզադահլիճ,
- ✓ արդիականացված բուժկետ:

5. Շարունակել հյուրանոցային համալիրի բարեկարգման և կենցաղային պայմանների բարելավման աշխատանքները :

- ✓ Վերանորոգված և բարելավված կենցաղային պայմաններով հյուրանոցային համալիր:

6. Իրականացնել արտակարգ իրավիճակներում արագորեն կողմնորոշվելու և անհրաժեշտ գործողություններ կատարելու կարողությունների զարգացմանը միտված միջոցառումներ:

- ✓ Արտակարգ իրավիճակներին վերաբերող տարեկան մեկ միջոցառում յուրաքանչյուր մասնաշենքի համար:

ԽՆԴԻՐ 1.4. ԲԱՐՁՐՈՐԱԿ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ապահովել մասնագիտական համայնքի կարողությունների զարգացումը:

Ակնկալվող վերջնարդյունք

Մասնաճյուղի կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական և հետազոտական կարողություններ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ օպտիմալացված կայուն կազմեր, որոնց կարիքներն ու աշխատանքի արդյունավետությունը պարբերաբար գնահատվում են և դրանց հիման վրա իրականացվում են բազմակողմանի կատարելագործման միջոցառումներ՝ նպաստելով նրանց մասնագիտական անընդհատ առաջընթացին:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **ԵՊՀ ԻՄ-ի բոլոր դասախոսների համար հասանելի դարձնել մասնագիտական զարգացմանը նպաստող միջազգային և ներբուհական թվային հարթակներ:**

   - ✓ Առնվազն երկու միջազգային գիտակրթական թվային հասանելի հարթակ,
   - ✓ կրթական նորագույն ծրագրերին մասնակցող դասախոսական կազմ:

2. **Դասախոսների վերապատրաստման ծրագրում ներառել հետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված մոդուլներ:**

   - ✓ Դասախոսական համակազմի որակավորման բարձրացման արդիականացված հետազոտահենք գործող ծրագիր,
   - ✓ վերապատրաստված մեծ թվով դասախոսներ,
   - ✓ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներից ուսանողների բավարարվածության աճ:

3. **Պարբերաբար իրականացնել ուսումնաօժանդակ և վարչական համակազմերի վերապատրաստումներ՝ հիմնված կարիքների գնահատման վրա և համահունչ ԵՊՀ ԻՄ-ի զարգացման գերակայություններին:**

- ✓ Վարչական և ուսումնաօժանդակ համակազմերի կարողությունների զարգացման գործող ռազմավարություն,
- ✓ վարչական և ուսումնաօժանդակ համակազմերի վերապատրաստման և ատեստավորման գործող կարգ,
- ✓ վերապատրաստումների արդյունավետության և որակի գնահատման ընթացակարգ,
- ✓ վերապատրաստված ուսումնաօժանդակ և վարչական համակազմ,
- ✓ վերապատրաստումներից բավարարվածության աճ,
- ✓ ուսումնաօժանդակ և վարչական համակազմի աշխատանքից բավարվածության աճ:

4. **Ակտիվացնել Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնի աշխատանքները՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտություններն արդիականացնելու ու զարգացնելու նպատակով:**

- ✓ Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնի աշխատանքներից դասախոսների բավարարվածության աճ,
- ✓ երիտասարդ դասախոսների դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների բարելավված արդյունքներ,
- ✓ երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ:

5. **Դասախոսներին և ուսանողներին տրամադրել խմբային և անհատական հոգեբանական խորհրդատվական ծառայություններ:**

- ✓ Հոգեբանական խորհրդատվությունների գործող ծառայություն,
- ✓ հոգեբանական խորհրդատվությունների ծառայություններից օգտվողների թվաքանակի աճ:

6. **Վարել կանխահայաց կադրային քաղաքականություն՝ աշխատանքի մեջ ներգրավելով ՀՀ և արտասահմանյան ականավոր գիտնականների և շնորհալի երիտասարդների:**

- ✓ Մշակված կադրային քաղաքականություն,
- ✓ ներգրված ականավոր և երիտասարդ գիտնականներ:

7. **Բազմազանեցնել ԵՊՀ ԻՄ-ի աշխատողների մասնագիտական աճի աջակցման և խրա-խուսման ձևերը, ներդնել մասնագիտական և անձնային աճի համակարգ:**

- ✓ Դասախոսների տարբերակված հավելավճարի բարելավված նորմեր,
- ✓ դրամական պարգևատրումներ, խրախուսումներ,
- ✓ աջակցություն գիտաժողովներին, հրապարակումներին, գործուղումներին,
- ✓ վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների տարբերակված հավելավճարի չափանիշներ և համապատասխան կարգ:

8. **Ներդնել դասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական համակազմերի աշխատանքի արդյունավետության գնահատման նոր համակարգ:**

- ✓ Կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների,
- ✓ պաշտոնների վերանայված անձնագրեր,
- ✓ պրոֆեսորադասախոսական կազմի հետ աշխատանքային հարաբերությունների սահմանման և աշխատավարձերի հաշվարկման նոր համակարգ,
- ✓ դասախոսական, ուսումնաօժանդակ, վարչական համակազմերի աշխատանքի արդյունավետության բազմագործոն գնահատման նորացված կարգեր:

9. **Ընդլայնել աշխատողների համար սոցիալական բազմաբնույթ ծրագրերի իրականացումը (առողջության ապահովագրություն, աշխատողների հանգստի կազմակերպում, մարզամշակութային ծրագրերի բազմազանեցում և այլն):**

- ✓ Մասնաճյուղի աշխատողների սոցիալական վիճակի մշտադիտարկման գործող մեխանիզմներ,
- ✓ աշխատողների համար գործող սոցիալական բազմաբնույթ նպատակային ծրագրեր,
- ✓ աշխատողների սոցիալական խնդիրների և պահանջմունքների վերաբերյալ ամենամյա հաշվետվություններ,
- ✓ իրականացվող սոցիալական ծրագրերից բավարարված աշխատողներ:

ԽՆԴԻՐ 1.5. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բարելավել Մասնաճյուղի միջազգայնացման ցուցանիշները կրթական և հետազոտական ոլորտներում:

<u>Ակնկալվող վերջնարդյունք</u>

Կրթական և հետազոտական ոլորտներում Մասնաճյուղի միջազգայնացման բարելավված ցուցանիշներ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Ներդնել համատեղ կրթական ծրագրեր:**

- ✓ Առնվազն 1 համատեղ ներդրված կրթական ծրագիր:

2. **Բակալավրի կրթական ծրագրերում ներդնել օտարալեզու դասընթացներ:**

- ✓ Յուրաքանչյուր կրթական ծրագրում առնվազն 1 օտարալեզու դասընթացի առկայություն:

3. **ԵՊՀ-ի աջակցությամբ միջազգային համագործակցության շրջանակներում ապահովել դասախոսների և ուսանողների վիրտուալ շարժունությունը:**

- ✓ Դասախոսների և ուսանողների վիրտուալ շարժունության դեպքեր:

4. **Զարգացնել ԵՊՀ ԻՄ-ի աշխատակազմի կարողությունները՝ միջազգային դրամաշնորհային ծրագրերում Մասնաճյուղի ներգրավվածության բարձրացման նպատակով:**

- ✓ Վերապատրաստված աշխատակիցներ,
- ✓ միջազգային դրամաշնորհային ծրագրերում ներգրավված աշխատակիցների թվի աճ:

5. **Ամրապնդել ԵՊՀ-ի և ԵՊՀ ԻՄ-ի ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերը՝ պարբերաբար իրականացնելով աշխատակազմի վերապատրաստումներ, փորձի փոխանակում:**

- ✓ Համագործակցության օրինակներ,
- ✓ վերապատրաստված աշխատակիցների թվի աճ,
- ✓ համաձայնեցված ընթացակարգեր:

6. **Օտարերկրյա համալսարանների և կազմակերպությունների հետ ստեղծել գիտակրթական ռազմավարական երկարատև համագործակցություն՝ օգտագործելով ԵՊՀ-ի միջազգային կապերը և նրա աջակցությունը:**

- ✓ Առնվազն մեկ օտարերկրյա համալսարանի կամ կազմակերպության հետ համագործակցության առկայություն,
- ✓ համատեղ իրականացված հետազոտություններ,
- ✓ կազմակերպված խորհրդատվություններ և սեմինարներ:

7. **Կայացնել այցելու պրոֆեսորի ինստիտուտը:**

- ✓ Տարեկան առնվազն 1 հրավիրյալ պրոֆեսորի այց (այդ թվում՝ վիրտուալ):

ԽՆԴԻՐ 1.6. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բարձրացնել Մասնաճյուղի կառավարման արդյունավետությունը կրթական ոլորտում:

Ակնկալվող վերջնարդյունք

Ներդրված ՊԻԳԲ (պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում) շրջափուլ՝ ուսումնական ստորաբաժանումների և դասախոսական կազմի գործունեության արդյունավետ կառավարումն ապահովող գործիքակազմերով, որն ընդունելի է շահակիցների համար և ապահովում է մասնակցային կառավարում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Զարգացնել ենթակառուցվածքները՝ խմբավորելով ստորաբաժանումներն ըստ կրթական, գիտական, կառավարման և այլ ուղղությունների:**

   - ✓ Մասնաճյուղի օպտիմալացված կազմակերպական կառուցվածք՝ ըստ ռազմավարական ծրագրի խնդիրների:

2. **Գործադրել հետադարձ կապի և դրա արդյունքների կիրառման բարելավված մեխանիզմներ՝ վարչակառավարչական ստորաբաժանումների համար:**

   - ✓ Ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացում,
   - ✓ Մասնաճյուղի ստորաբաժանումների և աշխատողների հաշվետվողականության ամբողջականացված համակարգ,
   - ✓ վարչական անձնակազմի պաշտոնների վերանայված նկարագրեր:

3. **Գործադրել ուսումնական ստորաբաժանումների գործունեության պլանավորման, իրականացման, մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմներ:**

   - ✓ Ուսումնական ստորաբաժանումների գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման գործող մեխանիզմներ:

4. **Վերանայել մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգը ու մշակել զարգացման ծրագրեր:**

- ✓ Մարդկային ռեսուրսների կառավարման նոր հայեցակարգ, զարգացման մշակված ծրագրեր:

5. **Ստեղծել և ներդնել դասախոսական կազմի կառավարման կենտրոնացված թվային հարթակ:**

- ✓ Դասախոսական համակազմի կառավարման գործող թվային հարթակ:

6. **Մշակել և իրականացնել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների նոր ծրագիր:**

- ✓ ԵՊՀ ԻՄ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների հաստատված ծրագիր,
- ✓ աշխատողների և ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացում,
- ✓ ԵՊՀ ԻՄ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի հաշվետվություններ:

7. **Բարձրացնել աշխատողների և ուսանողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը համալսարանի կառավարման համակարգում:**

- ✓ Ընթացակարգերի և գործընթացների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության առկայություն մասնաճյուղի կայքէջում,
- ✓ Կառավարման մարմիններում շահակիցների մասնակցություն:

ՆՊԱՏԱԿ 2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրականացնել և զարգացնել նորարարական հետազոտություններ՝ հասարակագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար և բնագիտական մասնագիտությունների լայն սպեկտրով:

ԽՆԴԻՐ 2.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Զարգացնել հետազոտահենք կրթություն:

Ակնալվող արդյունքներ

Ուսուցման նոր մոտեցումներով հետազոտահենք կրթական ծրագրերի իրականացում գիտական կառույցների և առաջատար գիտնականների հետ համագործակցությամբ, ձևավորված անհրաժեշտ միջավայրի առկայություն և հետազոտությանը տրամադրվող ֆինանսական ներդրումների աճ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Մշակել և իրականացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի բարձրացմանը միտված քաղաքականություն:**

   ✓ Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական մակարդակի բարձրացմանը միտված մշակված և գործող քաղաքականություն:

2. **Գիտահետազոտական ինստիտուտների հետ ներդնել մագիստրոսական համատեղ կրթական ծրագրեր:**

   ✓ Գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ ներդրված մագիստրոսական կրթական առնվազն 1 ծրագիր:

3. **Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարման գործում ներգրավել փորձառու հետազոտողների:**

   ✓ Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարման գործում ներգրավված հետազոտողներ:

4. **Կրթական գործընթացում զարգացնել նախագծի և խնդրի վրա հիմնված ուսումնառության մոտեցումները:**

- ✓ Նախագծի և խնդրի վրա հիմնված ուսումնառության մոտեցումներով իրականացվող դասընթացների թվաքանակի աճ:

5. **Մասնաճյուղում ակտիվացնել գիտահետազոտական գործունեությունը՝ ստեղծելով անհրաժեշտ կառույցներ և ապահովելով անհրաժեշտ միջավայր:**

- ✓ Ստեղծված գիտական խմբեր, երիտասարդական գիտական կազմակերպություններ,
- ✓ հետազոտական աշխատանքներում և գիտական խմբերում ընդգրկված ուսանողների և դասախոսների թվաքանակի աճ,
- ✓ հետազոտական աշխատանքներում ու գիտական խմբերում իրականացվող աշխատանքների և ավարտական աշխատանքների թեմաների համապատասխանելիության բարձր աստիճան,
- ✓ հետազոտական աշխատանքներում ու գիտական խմբերում իրականացվող աշխատանքների և կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչով դասաընթացների խնդիրների համապատասխանելիության բարձր աստիճան,
- ✓ ՈՒԳԸ կամ այլ գիտաժողովներում որպես զեկույց կամ գիտական հանդեսներում որպես հոդված ներկայացված մագիստրոսական աշխատանքներ:

6. **Գիտական հետազոտությունների զարգացման համար ներգրավել տարբեր ներդրողների և Մասնաճյուղի եկամուտներից կատարել հատկացումներ:**

- ✓ Արտաքին աղբյուրներից և գիտական արդյունքների ապրանքայնացումից ֆինանսական միջոցների աճ առնվազն բյուջեից կատարվող ծախսերի չափով,
- ✓ գիտական հետազոտությունների իրականացման համար ֆինանսական հատկացումների աճ:

7. **Պարբերաբար կազմակերպել գիտահետազոտական աշխատանքների իրականացման ներհամալսարանական դրամաշնորհային մրցույթներ:**

- ✓ Մարզի զարգացմանն ուղղված տարեկան առնվազն 3 հետազոտական թեմայի ֆինանսավորում ներքին դրամաշնորհային ծրագրերով,
- ✓ դրամաշնորհային ծրագրերում ներգրավված ուսանողների և դասախոսների թվի աճ:

ԽՆԴԻՐ 2.2. ԲԱՐՁՐՈՐԱԿ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Մշակել գիտական ներուժի պահպանմանը և զարգացմանն ուղղված քաղաքականություն:

Ակնալվող արդյունքներ

Երիտասարդ գիտնականների և ուսանողների գիտական ներուժի զարգացմանն ու աջակցմանը, գիտական գործունեության մեջ նրանց ներգրավմանն ուղղված համալիր միջոցառումներ և ծրագրեր:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Խրախուսել գիտահետազոտական նախագծերում ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի, այնպես էլ ուսանողների ներգրավվածությունը:**

   ✓ Գիտահետազոտական նախագծերում ներգրավված պրոֆեսորա-դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության մակարդակի աճ:

2. **Իրականացնել աջակցության ծրագրեր երիտասարդ հետազոտող դասախոսների համար:**

   ✓ Երիտասարդ հետազոտող դասախոսների համար իրականացված աջակցության ծրագրերի թվի աճ:

3. **Խրախուսել ուսանողական ամառային դպրոցների, ճամբարների կամ երիտասարդական այլ գիտական միջոցառումների կազմակերպումը և մասնակցությունը:**

   ✓ Գիտական միջոցառումներին մասնակցած ուսանողների և դասախոսների թվի աճ:

4. **Իրականացնել վերապատրաստումների շարք՝ նպատակաուղղված հոդվածներ գրելու կարողությունների զարգացմանը, պատրաստել համապատասխան ուղեցույց:**

   ✓ Երիտասարդ հետազոտող դասախոսների տպագրած աշխատանքների թվի աճ վարկանիշային ամսագրերում:

5. **Սահմանել ամենամյա մրցանակներ «Տարվա դասախոս», «Տարվա հետազոտող», «Տարվա ուսանող» անվանակարգերում:**

   ✓ «Տարվա դասախոս», «Տարվա հետազոտող», «Տարվա ուսանող» անվանակարգերով ամենամյա մրցույթներին մասնակցողների թվի աճ:

ԽՆԴԻՐ 2.3. ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Ամրապնդել Մասնաճյուղի՝ որպես գիտահետազոտական կազմակերպության վարկանիշը:

Ակնալվող արդյունքներ

Միջազգային և վարկանիշային ամսագրերում հրատարակությունների քանակի աճ, հետազոտությունների հանրայնացում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Մշակել և ներդնել բաց գիտության քաղաքականություն:**

   ✓ Բաց գիտության մշակված և գործող քաղաքականություն:

2. **Բարելավել Մասնաճյուղի հետազոտողների ներկայացվածությունը մասնագիտական ցանցերում:**

   ✓ Մասնագիտական ցանցերում Մասնաճյուղի հետազոտողների ներկայացվածության աստիճանի աճ:

3. **Ապահովել համալսարանական վիրտուալ տիրույթում գիտական շտեմարաններ մուտքի հնարավորություն:**

   ✓ Համալսարանական վիրտուալ տիրույթում գիտական շտեմարաններ մուտքի հնարավորության առկայություն:

4. **Խթանել միջազգային և հանրապետական վարկանիշային գիտական հանդեսներում հոդվածների հրապարակումը:**

   ✓ Միջազգային և հանրապետական վարկանիշային գիտական հանդեսներում հրապարակումների թվաքանակի աճ,
   ✓ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման վերանայված կարգ:

5. **Բազմազանեցնել հետազոտական գործունեության արդյունքների հանրայնացման ձևերը:**

   ✓ Դասախոսների և ուսանողների հետազոտությունների հրատարակված արդյունքների տարեկան ամփոփ ժողովածու:

ԽՆԴԻՐ 2.4. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՄԻՋԱՎԱՅՐ

Ապահովել գիտակրթական արդյունավետ և անվտանգ միջավայր:

Ակնալվող արդյունքներ

Հետազոտական և նորարարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ և անվտանգ ենթակառուցվածքներ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Ձևավորել գիտահետազոտական անվտանգ և անհրաժեշտ ռեսուրսներով ապահովված ենթակառուցվածքներ:**

   ✓ Հետազոտական ծրագրերի իրականացումն ապահովող գիտահետազոտական ենթակառուցվածքների առկայություն:

2. **Խրախուսել գիտության տարբեր բնագավառների միջգիտակարգային հետազոտությունների կատարումը:**

   ✓ Միջգիտակարգային հետազոտությունների խրախուսման նոր քաղաքականություն:

3. **Ձեռք բերել գիտամանկավարժական գործունեության համար անհրաժեշտ ծրագրային հատուկ փաթեթների լիցենզիաներ:**

   ✓ Գործունեության համար անհրաժեշտ ծրագրային հատուկ փաթեթների լիցենզիաների առկայություն:

ԽՆԴԻՐ 2.5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Զարգացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական համագործակցությունը գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ:

Ակնալվող արդյունքներ

Գիտական կառույցների և բուհերի հետ համատեղ իրականացվող հետազոտական բազմազան ծրագրեր՝ ուղղված տարածաշրջանի խնդիրների վերհանմանը և լուծմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Գիտահետազոտական ինստիտուտների հետ իրականացնել համատեղ նախագծեր:**

- ✓ Գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ իրականացված նախագծեր:

2. **Ընդլայնել գիտահետազոտական ինստիտուտների և բուհերի առաջատար մասնագետների ներգրավվածությունը ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի համաղեկավարման գործում:**

- ✓ Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարման նպատակով գիտահետազոտական ինստիտուտներից և բուհերից հրավիրված առաջատար մասնագետների թվաքանակի աճ:

3. **Ապահովել ձեռնարկությունների հետ գիտական համագործակցությունը:**

- ✓ Ձեռնարկությունների հետ գիտական համագործակցության գործող մեխանիզմներ:

4. **Ուսանողների ավարտական աշխատանքերի հետազոտական բաղադրիչը փոխկապակցել մարզի համայնքային հիմնախնդիրների հետ:**

- ✓ Մարզի հիմնախնդիրներին առնչվող ավարտական աշխատանքների թվի աճ:

ԽՆԴԻՐ 2.6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Զարգացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի միջազգային գիտական համագործակցությունը արտերկրի համալսարանների, գիտական կենտրոնների հետ:

Ակնալվող արդյունքներ

Շարժունության և դրամաշնորհային ծրագրերի մասին տեղեկատվության տարածման գործող մեխանիզմներ, ակտիվ գիտական գործունեություն և համագործակցության առկայություն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Ընդլայնել Մասնաճյուղի աշխատակիցների մասնակցությունը միջազգային գիտաժողովներին, սեմինարներին:**

- ✓ Միջազգային գիտաժողովներին մասնակցության աջակցման նոր քաղաքականություն:

2. **Խրախուսել Մասնաճյուղի աշխատակիցների ներգրավվածությունը միջազգային տարաբնույթ գիտակրթական հիմնադրամներով ֆինանսավորվող նախագծերում:**

- ✓ Միջազգային տարաբնույթ գիտակրթական հիմնադրամներով ֆինանսավորվող նախագծերի մասնակից խրախուսված մասնագետներ:

3. **Աջակցել արտերկրի համալսարանների և գիտական կենտրոնների հետ համագործակցող Մասնաճյուղի դասախոսներին և գիտահետազոտական լաբորատորիաներին:**

- ✓ Արտերկրի համալսարանների և գիտական կենտրոնների հետ համագործակցող Մասնաճյուղի դասախոսներին և գիտահետազոտական լաբորատորիաներին աջակցության գործող մեխանիզմներ,
- ✓ միջազգային գիտահետազոտական կենտրոններ գործուղումների ավելացում:

4. **Զարգացնել մասնաճյուղում գործող օտար լեզուների կենտրոնները:**

- ✓ Մասնաճյուղում գործող օտար լեզուների կենտրոններից օգտվող շահառուների բավարարվածության աճ:

5. **Բարձրացնել շարժունության ծրագրերի վերաբերյալ ուսանողների և աշխատակիցների իրազեկվածության մակարդակը:**

- ✓ Ուսանողների և աշխատակիցների շարժունության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական բազմաբնույթ նյութերի առկայություն,
- ✓ շարժունության ծրագրերի վերաբերյալ ուսանողների և աշխատակիցների իրազեկվածության բարձր մակարդակ:

6. **Ապահովել ԵՊՀ-ի շարժունության ծրագրերում Մասնաճյուղի դասախոսների ներգրավվածությունը:**

- ✓ ԵՊՀ-ի շարժունության ծրագրերում ներգրավված Մասնաճյուղի դասախոսներ:

ԽՆԴԻՐ 2.7. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Իրականացնել գիտահետազոտական գործունեության կառավարման միասնական քաղաքականություն:

<u>Ակնալվող արդյունքներ</u>

Տարածաշրջանի խնդիրների լուծմանն ուղղված ներքին դրամաշնորհների տրամադրման կանոնակարգված և պարբերական գործընթաց, ֆինանսական միջոցների ներհոսք արդյունքների առևտրայնացումից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Կանոնակարգել դրամաշնորհային ծրագրերի համար դիմելու գործընթացը, պարբերաբար իրականացնել մշտադիտարկում և վերահսկողություն:**

✓ Դրամաշնորհային ծրագրերի համար դիմելու գործող համակարգ, ✓ դրամաշնորհային ծրագրերի մասնակիցների թվի աճ, ✓ համակարգի գործունեության մշտադիտարկման հրապարակված զեկույցներ:

2. **Բարելավել ներբուհական դրամաշնորհային ծրագրերի իրականացման գործընթացը:**

✓ Ներբուհական դրամաշնորհային ծրագրերի թվի աճ:

3. **Նպաստել գիտական արդյունքների առևտրայնացմանը:**

✓ Մտավոր սեփականության և առևտրայնացման քաղաքականության առկայություն, ✓ գիտական արդյունքի առևտրայնացման մշակված մեթոդաբանություն:

ԽՆԴԻՐ 2.8. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Իրականացնել գիտահետազոտական գործունեության էթիկական նորմերի գործադրման և բաց գիտական միջավայրի ձևավորման քաղաքա-կանություն:

<u>**Ակնալվող արդյունքներ**</u> Հետազոտության ոլորտում գործող բարեվարքության և էթիկայի նորմեր, գիտական արդյունքների գնահատման համակարգ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Զարգացնել հետազոտությունների իրականացման էթիկայի նորմերի պահպանման մեխանիզմները:**

✓ Հետազոտությունների իրականացման էթիկայի նորմերի պահպանման գործող բազմազան մեխանիզմների զարգացում:

2. **Մշակել և ներդնել գիտական հետազոտությունների արդյունքների մշտադիտարկման ու գնահատման համակարգ:**

✓ Գիտական հետազոտությունների արդյունքների մշտադիտարկման ու գնահատման գործող համակարգ, ✓ գիտական հետազոտությունների արդյունքների մշտադիտարկման ու գնահատման զեկույցներ:

ՆՊԱՏԱԿ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Զարգացնել համալսարանի հանրային ներգրավվածության համակարգը, խթանել միջազգայնացումը և բարձրացնել սոցիալական պատասխանատվությունը:

ԽՆԴԻՐ 3.1. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Ուսումնասիրել հանրային պահանջարկը և աշխատաշուկայի պահանջներին ու ԵՊՀ ԻՄ-ի շահակիցների կարիքներին համապատասխան առաջարկել լրացուցիչ կրթական ծրագրեր:

Ակնալվող արդյունքներ

Հանրային պահանջարկին, աշխատաշուկայի պահանջներին ու ԵՊՀ ԻՄ-ի շահակիցների կարիքներին համապատասխան լրացուցիչ կրթական ծրագրեր:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. Ապահովել կայուն համագործակցություն լրացուցիչ կրթական ծրագրերի տարբեր շահակիցների հետ:

   - ✓ Մասնաճյուղի հետ լրացուցիչ կրթական ծրագրերի տարբեր շահակիցների համագործակցության առաջարկների հաստատված փաթեթ,
   - ✓ համագործակցության հաստատված պայմանագրեր,
   - ✓ համագործակցության արդյունքների վերաբերյալ հաշվետվության զեկույցներ:

2. **Մշակել և ներդնել աշխատանքին կողմնորոշված լրացուցիչ կրթական ծրագրեր:**

   - ✓ Լրացուցիչ կրթության հաստատված քաղաքականություն,
   - ✓ պահանջարկի ուսումնասիրության արդյունքներն ամփոփող զեկույց,
   - ✓ իրականացվող 2 լրացուցիչ կրթական ծրագիր (առկա կամ հեռակա),
   - ✓ լրացուցիչ կրթության արդյունավետության և որակի գնահատման մշակված ցուցիչներ,
   - ✓ լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացումից շահակիցների բավարարվածության վերաբերյալ զեկույցներ:

3. **Ներդնել և զարգացնել լրացուցիչ կրթական ծրագրերի առցանց (հեռավար) իրականացման հնարավորությունները, մշակել և գործադրել համապատասխան կարգ:**

- ✓ Լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման (առկա և հեռավար) գործող կարգ:

ԽՆԴԻՐ 3.2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ձևավորել ձեռնարկությունների հետ համագործակցության կայուն համակարգ և նպաստել շահակիցների կարիերայի զարգացմանը:

<u>Ակնալվող արդյունքներ</u>

Ձեռնարկությունների առաջատար մասնագետների և մասնագիտական գործունեության ոլորտում հաջողության հասած շրջանավարտների ներգրավվածություն կրթական գործընթացներում և աջակցություն շահակիցների կարիերայի զարգացմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **ԵՊՀ ԻՄ-ի տարբեր ստորաբաժանումների ներգրավմամբ ձևավորել ձեռնարկությունների հետ համագործակցության ընդհանուր համակարգ:**

- ✓ Ձեռնարկությունների հետ համագործակցության հաստատված կարգ,
- ✓ ձեռնարկությունների հետ համատեղ իրականացվող նախագծերում ներգրավված ուսանողներ և նրանց թվաքանակի աճ,
- ✓ մարզի ինքնակառավարման մարմինների և գործարար ընդհանրության հետ բիզնես համագործակցության շրջանակներում լուծված 3 տարածաշրջանային խնդիր,
- ✓ բազային կազմակերպությունների աշխատակիցների կողմից դասախոսական կազմի համար կազմակերպված խոհրդատվություններ:

2. **Իրականացնել ԵՊՀ ԻՄ-ի՝ վերջին 5 տարվա շրջանավարտների զբաղվածության և աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրություն:**

- ✓ ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների զբաղվածության և աշխատաշուկայի կարիքների մշտադիտարկման (մոնիթորինգի) ներդրված համակարգ,
- ✓ գործող «Շրջանավարտների միություն»:

3. **Համակարգել ֆակուլտետային ամենամյա էքսպոների և աշխատանքային տոնավաճառների կազմակերպման և իրականացման գործընթացները:**

- ✓ Էքսպոների և աշխատանքի տոնավաճառների կազմակերպման հարցերով զբաղվող աշխատանքային գործող խումբ,
- ✓ էքսպոներին և աշխատանքային տոնավաճառներին ֆակուլտետների մասնակցության ամենամյա մշակված պլաններ,
- ✓ էքսպոների և աշխատանքի տոնավաճառների մասնակցության վերաբերյալ ֆակուլտետների ամենամյա հաշվետվություններ:

4. **Կազմակերպել և իրականացնել լրացուցիչ պրակտիկաներ (ինտերնշիփ, մենթորշիփ և այլն):**

- ✓ Լրացուցիչ պրակտիկայի կազմակերպման գործող կարգ,
- ✓ իրականացված լրացուցիչ պրակտիկաներ,
- ✓ պրակտիկաներից ուսանողների բավարարվածության աճ:

ԽՆԴԻՐ 3.3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարելագործել ոչ ֆորմալ կրթական և խորհրդատվական ծառայությունների համակարգը:

<u>Ակնալվող արդյունքներ</u>

Աշխատաշուկայի պահանջներին և հանրության կարիքներին համապատասխան նոր մոտեցումներով լրացուցիչ կրթական ծրագրեր և մասնագիտական կանոնակարգված խորհրդատվություններ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Բացահայտել և գնահատել շահակիցների լրացուցիչ կրթական կարիքները:**

- ✓ Ոչ ֆորմալ կրթական ծառայություններ իրականացնելու Մասնաճյուղի հաստատված քաղաքականություն,
- ✓ շահակիցների վերհանված լրացուցիչ կրթական կարիքների հաշվառման տվյալների բազայի առկայություն:

2. **Շահակիցներին տրամադրել մասնագիտական աճին և կարիերայի զարգացմանը նպաստող խորհրդատվական ծառայություններ:**

✓ Տարեկան իրականացված առնվազն 10 խորհրդատվական ծառայություն:

3. **Խթանել նորարարական մոտեցումների և մեթոդների կիրառումը ոչ ֆորմալ կրթական նախաձեռնությունների իրականացման գործընթացներում:**

✓ Նորարարական մոտեցումներով ոչ ֆորմալ կրթական ծառայություններ իրականացնող խրախուսված դասավանդողներ:

4. **Ապահովել ԵՊՀ ԻՄ-ի կողմից իրականացվող ոչ ֆորմալ կրթական և խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ հանրային իրազեկումը:**

✓ Հանրային իրազեկման նպատակով պարբերաբար իրականացված միջոցառումներ:

ԽՆԴԻՐ 3.4. ԿԱՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ապահովել Մասնաճյուղի հաշվետվողականությունը հանրությանը:

<u>Ակնալվող արդյունքներ</u> Ըստ հաստատված քաղաքականության՝ տարածաշրջանի հանրության և կառույցների հետ համագործակցության արդյունավետ մեխանիզմներ և ծրագրեր, Մասնաճյուղի գործունեության թափանցիկությունն ապահովող գործընթացներ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Մշակել տարածաշրջանի հանրության հետ Մասնաճյուղի փոխհամագործակցության քաղաքականություն:**

✓ Տարածաշրջանի հանրության հետ Մասնաճյուղի փոխհամագործակցության հաստատված քաղաքականություն:

2. **Ակտիվացնել համագործակցությունը տարածաշրջանի հասարակական, կրթական, տնտեսական և մշակութային կառույցների հետ:**

- ✓ Տարածաշրջանի հասարակական, կրթական, տնտեսական և մշակութային կառույցների հետ իրականացված 15 ծրագիր,
- ✓ Մասնաճյուղի մասնակցություն մարզի հասարակության համար իրականացվող 10 ծրագրում:

3. **Բարելավել հանրությանը Մասնաճյուղի հաշվետվողականության համակարգը և նրա արդյունավետության գնահատման մեխանիզմները:**

- ✓ Հանրությանը Մասնաճյուղի հաշվետվողականության ապահովման գործող մեխանիզմներ:

4. **Բարելավել հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:**

- ✓ Հասարակության հետ հետադարձ կապի ապահովման գործող մեխանիզմներ:

5. **Ակտիվացնել համագործակցությունը մասնաճյուղում գործող կենտրոնների (Անգլերենի ռեսուրս կենտրոնի, Գյումրիում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի Իջևանի մասնաճյուղի, «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի, Տավուշի մարզի Գիտելիքի նորարարական հաբի) հետ:**

- ✓ Կենտրոնների հետ համատեղ իրականացված 30 ծրագիր:

ԽՆԴԻՐ 3.5. ԵՊՀ ԻՄ-Ի ՎԱՐԿԱՆԻՇԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Բարձրացնել Մասնաճյուղի հանրապետական և միջազգային տեսանելիությունը և գրավչությունը:

<u>Ակնալվող արդյունքներ</u>

Մասնաճյուղի ներգրավվածություն հանրապետական և միջազգային ուսումնագիտական տարբեր գործընթացներում և ծրագրերում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ / ՑՈՒՑԻՉՆԵՐ

1. **Մշակել Մասնաճյուղի միջազգայնացման քաղաքականություն՝ ապահովելով շահակիցների ներգրավվածությունը:**

- ✓ Մշակված միջազգայնացման քաղաքականություն,
- ✓ միջազգայնացման և արտաքին կապերի համար պատասխանատու վերապատրաստված վարչակազմ,
- ✓ վերապատրաստումներից բավարարված միջազգայնացման համար պատասխանատու վարչական կազմի աշխատակիցներ:

2. **Պարբերաբար տրամադրել ԵՊՀ ԻՄ-ի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն հանրապետական և միջազգային վարկանիշային համակարգերին:**

- ✓ ԵՊՀ ԻՄ-ի ներգրավվածություն վարկանիշային համակարգերում, դիրքի բարելավում:

3. **ԵՊՀ ԻՄ-ի կայքում օտար լեզուներով ակտիվացնել Մասնաճյուղի հանրապետական և միջազգային համագործակցությանն առնչվող գործընթացների լուսաբանումը:**

- ✓ Եռալեզու կայքէջի առկայություն,
- ✓ կայքէջում միջազգայնացմանն առնչվող 2 օտար լեզվով լուսաբանված գործընթաց:

4. **Մշակել ԵՊՀ ԻՄ-ի PR և մարքեթինգային հաղորդակցության ռազմավարություն և երկարաժամկետ ու կարճաժամկետ գործողությունների ծրագիր:**

- ✓ Մարքեթինգային հաղորդակցության հաստատված հայեցակարգ (քաղաքականություն) և գործողությունների ծրագրեր:

5. **Պարբերաբար իրականացնել ԵՊՀ ԻՄ-ի միջազգայնացման բենչմարքինգ և տարեկան գործողությունների պլանավորում:**

- ✓ Միջազգայնացման բենչմարքինգի իրականացման հաստատված ընթացակարգ,
- ✓ միջազգայնացման տարեկան գործողությունների հաստատված ծրագիր և պլա-ն-ժամանակացույց,
- ✓ միջազգայնացման բնագավառում Մասնաճյուղի առաջընթացի վերաբերյալ ամենամյա զեկույցներ:

Հավելված 3

ԵՊՀ ԻՄ 2020թ. դեկտեմբերի 25-ի նիստի թիվ 48/5 որոշմամբ հաստատված «Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում գիտական դրամաշնորհների տրամադրման կարգում կատարված փոփոխությունները

1. Կարգի 1-ին մասի 1.1. կետը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «Սույն կարգը սահմանում է գիտական գործունեության համար «Երևանի պետական համալսարան հիմնադրամի» Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ) բյուջետային միջոցներից ֆինանսավորվող գիտական դրամաշնորհների ստացման մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման և անցկացման ընթացակարգը».
2. Կարգի 3-րդ մասի 3.1. կետը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «Նախքան մրցույթի հայտարարումը՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը կազմավորում է դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի՝ առնվազն 6 անդամից բաղկացած մրցութային հանձնաժողով: Հանձնաժողովում ընդգրկվում են յուրաքանչյուր ֆակուլտետից մեկական անդամ, որոնց առաջարկում են ֆակուլտետների գիտական խորհուրդները գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսական կազմից: Տնօրենի համապատասխան հանձնարարականով՝ ֆակուլտետների դեկանները գիտական խորհուրդների հաստատմանն են ներկայացնում հանձնաժողովի մեկական անդամի՝ յուրաքանչյուր ֆակուլտետից: Այնուհետև, ֆակուլտետների գիտական խորհուրդների համապատասխան որոշումը դեկանները ներկայացնում են տնօրենին, ով, իր հերթին, ստորագրում է հանձնաժողովի կազմավորման մասին հրամանը: Հանձնաժողովի կազմավորման մասին տնօրենի հրամանով նշանակվում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Հանձնաժողովի նախագահը ի պաշտոնե «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավարն է, իսկ քարտուղարը՝ «Տավուշ» հետազոտական կենտրոնի մասնագետը».

3. Կարգի 3-րդ մասի 3.4. կետը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են հանձնաժողովի քարտուղարի կողմից: Արձանագրությունը պարտադիր կարգով ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, ինչպես նաև նիստին ներկա անդամները (առցանց կազմակերպված նիստերի դեպքում հանձնաժողովի անդամները կարող են ստորագրել նաև էլեկտրոնային եղանակով)».
4. Կարգի 3-րդ մասի 3.7. կետը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «Հանձնաժողովի առաջին նիստը գումարվում է հանձնաժողովի ձևավորման մասին տնօրենի հրամանի հրապարակումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, որում՝

   ա) հաստատվում է հանձնաժողովի առաջին նիստի օրակարգը.

   բ) հաստատվում են մրցույթի հրավերի և հայտարարության տեքստերը.

   գ) հաստատվում են հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և ժամը».
5. Կարգի 4-րդ մասի 4.1. կետը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «Դրամաշնորհների մրցույթին կարող են ներկայացվել կոլեկտիվ կամ անհատական հայտեր, որոնք պատրաստվել են ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցների կողմից՝ պայմանով, որ ղեկավարը և նախագծի ենթադրվող բոլոր կատարողների առնվազն 50 տոկոսը լինեն ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցները կամ ուսանողները».
6. Կարգի 4-րդ մասի 4.2. կետը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «Յուրաքանչյուր նախագծում կարող է լինել մեկ ղեկավար: Նույն անձը մյուս հայտերում չի կարող հանդես գալ որպես ղեկավար կամ կատարող».
7. Կարգի 5-րդ մասի վերնագիրը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «Դրամաշնորհների տրամադրման մրցույթի անցկացման և ամփոփման կարգ».
8. Կարգի 5-րդ մասի 5.1. կետի զ) ենթակետից հանվել է «գնահատման չափանիշներ» բառակապակցությունը, քանի որ այն նույնությամբ կրկնվում է է) ենթակետում.
9. Կարգի 5-րդ մասի 5.1. կետում է) ենթակետից հետո ավելացվել են «ը) դիմումի ձևը, տիտղոսաթերթը, նախագծի անոտացիան, թ) ծախսերի նախահաշվի ձևը, ժ)

ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների ձևերը» ենթակետերը. մնացյալ ենթակետերը թողնվել են անփոփոխ.

10. Կարգի 5-րդ մասի 5.2. կետը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «Մրցույթի հայտարարությունը և հրավերի փաթեթը հրապարակվում են ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքէջում».
11. Կարգի 5-րդ մասի 5.5. կետը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. Հայտը ներկայացվում է սոսնձված և ստորագրված ծրարով: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մրցույթի հրավերում նշված թվով կրկնօրինակներից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը: Մինչև մրցույթի հայտերի բացման նիստը քարտուղարին արգելվում է մրցույթին մասնակցության հայտեր ներկայացրած անձանց մասին այլ անձանց տեղեկություններ հաղորդելը».
12. Կարգի 5-րդ մասի 5.9. կետում փորձագետների թիվը «2»-ից դարձվել է «3».
13. Կարգի «Հավելված 3»-ում կատարվել է տվյալների ներկայացման ձևի փոփոխություն, մասնավորապես՝ դրանք կներկայացվեն աղյուսակի տեսքով:
14. Կարգի «Հավելված 4»-ը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «Համառոտ պարբերությամբ ներկայացնել նախագծի նպատակները՝ հայերեն: Ներկայացնել մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և օգտագործված գրականության ցանկը: Մինչև 8 էջի սահմաններում ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, թեմայի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, օրացուցային պլանը (մինչև մեկ տարի տևողությամբ հայտերի դեպքում ըստ կիսամյակների, իսկ մինչև վեց ամիս տևողությամբ հայտերի դեպքում՝ ըստ եռամյակների), իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները: Մինչև 2 էջի սահմաններում նշել տվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները».
15. Նախագծի ղեկավարի (հավելված 5) և կատարողների (հավելված 6) տվյալներին վերաբերող հավելվածներում ավելացվել են «հայերեն / ռուսերեն / անգլերեն» և «Անձնագրի սերիան, համարը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրված» հատվածները.

16. Հավելվածների բաժնում ավելացվել են «Ծախսերի նախահաշիվ» և «Ծրագրի արդյունաների կիրառման հեռանկարը» վերնագրերով հավելվածները, համապատասխանաբար՝ «Հավելված 7» և «Հավելված 8».
17. Հավելված 9-ի 1.1. կետը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «Մրցութային մասնակիցներին որոշելու մասին արձանագրության հաստատումից հետո ԵՊՀ ԻՄ-ի հետազոտական կենտրոնն անցկացնում է նյութերի փորձաքննություն՝ ըստ տվյալ դրամաշնորհի համար սահմանված չափանիշների: Այնուհետև, 20 օրացուցային օրվա ընթացքում իրականացվում է գիտական փորձաքննություն»:
18. Հավելված 9-ի 1.2. կետը վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «Գիտական փորձաքննության խնդիրը հայտարարված գիտահետազոտական աշխատանքի գիտական, գիտատեխնիկական և գործնական արժեքի գնահատումն է: Անհրաժեշտության դեպքում հետազոտական կենտրոնը փորձաքննության համար կարող է ներգրավել անկախ փորձագետի (ով այն ստորաբաժանման աշխատակիցը չէ, որտեղ աշխատում է հայտատուն)»: